

Ա Ր Ե Ի Մ Ո Ի Տ Ք

ԱՐՁԱԳԱՆՔ ԵՐԲՈՎԱՅԻ ԼՈՒՍՈՒՈՐՈՒԹԵԱՆ.

Ա. Տաթ. Թիւ 2. Հրատարակի յսկիոր Երևոյ անարտ. քաղաքացիական գործերի վարչութեան կողմէն: Գործադիր.— Բաբիյ. Առջոյ Պետրոսեան, 22, rue de Fleury. 1859 Պապիւ 1.
— Պոլիս, Սելայ Սիւնն.— Իզմիր, Արդոյ Արիստիտոս.— Սոփիա, Արդոյ Տէր Գալուստեան Կոթոյի:

ԱՐԵՒԵԼՔԻՆ ՎԵՐՋԸ.

Թէպէտ ջատ անգամ բերնով և գրով յայտնէր լինի, թէ ինչ պատճառաւ Արեւելքը, մէջ մը խաղաղութիւնէ ետքը, նորէն չհրատարակուեցաւ, կ'երկի որ տակաւին ամենք չ'են ուղիւ հասկնալ և կը յանգցնին տնոր ասոր քով Գիւնի բամբասակ անիմոյ: Ատող է որ երեք անգամ քանք ըրինք հիմնադիրներու փախաղը և դերն չ'անեն, և քանի մը ուղղագիւնք՝ Եղերսիւնը խանաղով, խօսք տալիս մեզ ձեռնառ ըլլալու. բայց այն թէւածիւնը՝ որով կ'աղկին որ Պ. Դ. Այվազովսիին ըրածը մասնաւոր, անընդունելի էրեւցաւ մեզ և էտ քաղաքացիներ, փոսն դի պատիւը աչապէս կը հրատարայ: Չ'ենք կարծեր որ մէկը իրատեսք ունենայ գիւնի մեղադրել այս պարագայի մէջ ուր, Եթէ չ'կրցոյնք միտքի իրատեսքը աղաւել, զոնք չ'ապագային որ ուսումնոր կ'սխալի այն սե կը բռնաւորներէ: Ատկայն անոնք որ թէւածիւնը կ'առաջարկէին կ'ապեն հիմա ներշնակը պոյնի հատարակութեան առջև ու առջև պատասխանատուութիւն մեր վրայ բռնաւորել: Վերջին անգամ իրոյս եղեկու առնն մասնաւոր մէկ աղաւտիցացի էին որ, Եթէ կրօնական վեհերէ հրատարակէր և Թրանսպի օրէնքներու հարտակիւնք, առնն ուղաւորութիւնս անհետք մեր կարծիքները հրատարակելու: Առնն տակիւն յօդարակամ և յիշանք մեր յատարակութիւն մէջէն քոնի մը խօսք յօդարակութեան օրակն զի անասի մը հոյեր թիւր մէկնութիւն մը չտան անոնց. բայց երբ յետագայ նամակը տարակրկին (1) կարդայինք տեսանք որ իր կամքը տրիշ էր և կերպով մը կ'ուզէր դժեղ գործի բնել... Թող հասարակութիւնը բննէ և արդէ Եթէ այս նամակը Հայ Սկիզբեաց և Թրանսպի օրէնքին դէմ է... Առ այժմ ասիկ անկի չ'ենք ըսեր, և կը հրատարակենք ասորովոր որ համապատասխան յոսմին պահէ լեզուն իրեն հարեւոր... Գիտէր որ Արեւելքը Այվազովսիին կամքը մերժելէ ետե օրիշ կրօնաւորի օտաւորին ներքին չ'էր կրնար օղակնիւ, մասնաւոր էր որ տն ասուերա...

Առեւելեան Պ. Յակոբը ոչ Հայաստանեայց Սկիզբեաց և ոչ Թրանսպի օրէնքը կը ներկայեցնէ. Եթէ ասորովոր և իր բարեկամները այս երկուքէն ալ վեր կը դնեն

Պ. Առեւելեանը մեր անորոշ էթնիկալութիւնը և ոչ որիշ իշխանութիւնը, Եթէ տնի, կը նամակներ կ'ըրէր: Պ. Յակոբը աղաւտութիւնէն աւելի սիրելի է իրենց, մենք աղաւտութիւնէն աւելի ոչ ուղղային և ոչ օտարապէս մը կը սիրենք: Պ. Յակոբին անանք հայրենիքի ջատ արմէք ունի իրենց քով, մեր առջև հոյիւ. Թէ հայ մը կ'արթնանի...

Ոչ այս տողերը կը գրէինք և ոչ յետագայ նամակը կը հրատարակէինք Եթէ մեր պահած յոսմինը պահուէր նաեւ այն մարդերէ որք, կարծենք, մեր լուսմիննէն աւելի օգուտ կը քաղէն քան Եթէ մեր զրեւի, փոսն զի գիտէն որ Գիւնի զրեւի տանք Եթէ հրատարակաւ խօսիւն ըլլանք... Համարած էինք որ, Եթէ խօսիւններն չ'անկին, աղաւտութեան արմէքը չ'էին գիտեր ատկային և չ'անկնորոշութիւնը բնաւ: Ոչ արդէս ուղաւորութիւնը օր մը սիրելի է իր կեանքի մէջ, և Ետքը զանիկա Առեւելեան Պ. Յակոբին ասուերա տալիս նամակ է: Գիտէիք Սկիզբի ճէտ կ'ըսէր. «Quiconque renonce volontairement à la liberté, après l'avoir connue, se rend coupable de suicide moral; il anéantit en lui le principe essentiel de la vie humaine; il renie son âme immortelle et va se mêler, se confondre avec les bêtes.»

Առեւելեան Պ. Յակոբին նամակը, Եթէ ոչ օր գրուէր, որիշ ոչ և մասնաւոր որիշ ձե կ'անկնոր. բայց չ'ենք ուղիւն փախիւնութիւն մը ընէ, Եթէ և, իրեն համար, ջատ Թոյ Էրեւի մեր այս պատասխանը...

Ա. Ո.

Առ Թարոն Յակոբ Կոնիկեան.

Il est une suprême dignité qui par elle-même ne donne point de rang, c'est celle qui résulte de la qualité d'honnête homme.

Ձեր յարգութիւնը նամակ մը գրած ունի ինձ ասիկ գրեթէ մէկ տարի առաջ: Մինչև հիմա պատասխան չտալի մեր այն տալիսուն որք ջատ գիտելու արմինի են և դորս անհետարին է մասնաւոր:

Արջողութիւնս այնքան տկար չէ որ ձեզ նման անգիտ յարեւմտի մը նամակը և ասիկ անգիտ խաւանները

(1) Պ. Կ. Շահնազարեան.

մոռնայ: Քանզ ըսաւ. « յիշողութիւնն է երեւակայութիւնն անցեալին » . (1) և թրաւի կը հաստատէ թէ՛ մարդկային մտքի այս ոյժը՝ երկրորդ տեսակ զգայութիւն մ'է: Այս զգայութիւնը կրնայ տկարանալ մեր մտքին մէջ, այլ ոչ երբէք անհետիլ որքան որ խորհելու արտօնութիւնը կը պահենք:

Փիլիսոփայ Էֆէնտի, որքան գոռ ռնկնամ ձեր մշտքի վրայ, սիրտս չկրնար այն աստիճան կակղիլ որ մոմի կաղմ ստանայ և որու վրայէն ժամանակը, իր թելով, ամէն գրոշմ սրբէ հանէ: Հաւաստի եղիք որ սիրտս աւելի պահուն կաղմ ունի և երբ ձեզի նման բարեկամ մը երկասյրի գործիով վէրք մը կամ աւելի թեթեւ բառով ըսեմ որ դուք ալ չվիրաւորուիք, նշան մը կը դրոշմէ հոն,՝ ժամանակին թելը անկարող է ջնջել դայն: Ինչ ընեմ, աստուածաբան Էֆէնտի, բնութիւնը այսպէս սիրտ մը շնորհեր է ինձ. կարելի է ինձ արդեօք զանգատիլ անկէ երբ հաստատ գիտեմ որ ամէն էակի որոշ նպատակ մը սահմաներ է անոր էութիւն տալու ժամանակ: Ձեր սիրտը ենթակայ ըրեր է միշտ հակելու տեսակ մը վարդապետներու կողմը, ինչպէս իմ սիրտս ալ դատարարներ է այն մարդերէ հեռի ապրելու թըշուառ՝ այլ կանգուն և պատրաստ Աղատութեան առջև: Ունայն աշխատութիւն է բնութեան անբայքայելի օրէնքին դէմ ապստամբել. հարկ է որ այն կատարուի: Այս է արեւելեան ժողովուրդներու փիլիսոփայութիւնը զոր, ինչպէս կը լսեմ, կը սիրէք շատ և որու պաշտպան էք նաև Փրանսայի մէջ:

Ուստի, խնդրեմ ազատօրէն, չ'ըլլայ որ երեսակայէք որ մոռցայ կամ պիտի մոռնամ երբէք ձեր սիրալիր նամակը և անոր մէջի սիրաբոյր ողջոյնը: Այլ պիտի ըսէք, վասն զի դուք շատ բան ըսել սովորէք էք, եթէ կը յիշէի դայն, ինչու արդեօք պատասխան չտուի. ինչ է պատճառ իմ այս երկարօրէն լռութեան և ինչպէս եղաւ որ աններելի տմարդութիւն մ'ըրի...: Այլ և այլ պատճառներ կան զորս կը համառօտեմ երկուքի և կը յուսամ թէ՛ այսքան կը բաւէ զիս արգարացընելու համար, ոչ ձեր այլ հասարակութեան առջև ուր երեւիլ չէք ուղեր այնքան կը սիրէք... համեստութիւնը:

Նախ՝ երբ ձեր անանկալ նամակը եկաւ ինձ, ես հիւանդ էի և յանկոճի կը տառապէի: Նրկորդ՝ ձեր յարգութիւնը ճանչնալու պատիւ չունիմ: Ուստի երբ է՛ղգամ մէկէ ի մէկ որ զձեզ բարեկամ կը դաւանիք իմ նուատուութեան, և յանուն այս բարեկամութեան « ազդարարութիւն » մը (այս ձեր բառն է և avertissement կը նշանակէ) կուտար ինձ, շատ բնական բան է որ մէջ մը ուշաբրիմ և աշխատիմ գիտնալու թէ՛ սրկէ կը ծագի ձեր այս բարեկամութիւնը, ուսկէ կուգայ, ո՛ր կերթայ, ինչ կրնայ բերել և ինչ նշանակութեան արժանի է...:

Կը տեսնէք, մետաքսաբան Էֆէնտի, որ ձեր նամակը զիս կը բռնադատէր այս դժուար խնդիրները ի մտի յուղել, լուծել և ըստ այնմ որոշել որպէս զի թեթեւաբար չվարուիմ և ինքնաճուէր բարեկամի մը (այս բառն ալ ձեր է) զալուստը չմերժեմ: Դուք ալ կը հաւանիք, փիլիսոփայ Էֆէնտի, թէ՛ այս ամէնը ժամանակի կարօտ է. ծոյլ միտքս շուտով չ'ըմբռնէր այն յարաբերութիւնները որ ձեր բարեկամութիւնը կրնար ունենալ անյայտ նպատակի մը հետ: Ներելու է, կ'աղաչեմ, եթէ անյայտ բառը զործ ածել կը հարկադրուիմ. վերը ըսի և կը կրկնեմ, չեմ ուղեր ձեր քնքուշ սիրտը վիրաւորել. վասն զի կը հաւատամ որ արդարև զիս կը սիրէք: Ձեր նամակը վկայ է ինձ, և այս պարագայի մէջ թերահաւատութիւն մը չ'մտնէր բնաւ թէպէտ և կատկածիմ և ըսեմ իւրովի. հապա եթէ զիս ատէր ինչ պիտի ընէր արդեօք...:

Շատ ազգայինը կը հաստատեն թէ՛ դուք միշտ յայտնի տկնեմ, շօշափելի նպատակներ կ'ընարէք որ ամէն մարդ տեսնէ և..... քաջալերուի: Նրանի՛ այն հայերուն որ ձեր ետեւէն կ'երթան:

Ժամանակ անցաւ, անճաման օրեր իրարու յաջորդեցին և անլուր դէպքեր երեւան ելան: Չարմանք եկաւ իմ վրայ. նայեցայ մէջ մը ուշի ուշով բոլորտիքս. անդուստ հետաքրքրութիւն մը առաւ զիս. կամք ըրի հաւկընալ ձեր նպատակը և սկսայ զձեզ չափել, այն դէպքերը քննել մի առ մի, իրարու համեմատել, պարզել, և հահա ինչ կը տեսնեմ, — ամէն պարագայի մէջ ձեր մատը և ձեր ոտքը: Ո՛հ, այն ատեն իրազեկ եղայ, այլ կարի ուշ ձեզի մասնաւորապէս զրելու և ձեր սիրոյ համբոյրները մերժելու բողբոլովին: Այլևայլ ամիսներով խափանուելէ ետեւ (կարծեմ գիտէք ինչու և որու ձեռքով ու հարկ չ'է ձեզի ալ յայտնել) նորէն եղնելու վրայ էք. ուղեցի հրապարակաւ պատասխան տալու որպէս զի եթէ մէկը իմ վիճակի մէջ գտնուի, չտատամսի երբէք թէ՛ ձեր կողմէն եկած բարեկամութիւնը ինչ արժէք և նշանակութիւն ունի.....:

Աստուածաբան Էֆէնտի ձեր նամակը կ'սկսիք ըսելով որ կրօնական կոխը վերստին ծագեր է Թիւրքիայի մէջ և թէ՛ անկէ առաջ եկած վրդովը ձեր սրտին շատ վիշտ կը պատճառէ: Կրօնական կոխը հոն ծագելու հարկաւորութիւն չունի, խրատատու Էֆէնտի, վասն զի դադրելու կամք չունի, միշտ կտալրի անյայտ և յայտնի կերպով, միտքերը կը ժանգոտէ, սիրտերը կը մաշէ և սէրը կը թունաւորէ անգուլ: Ուստի կարծեմ, կուղեր ըսել թէ՛ կրօնական վէճընոր սաստկութիւն մը. զրգիւ մ'առեր է քանի մը սեւաղէմ հոգիներու շունչէն իբրև մաղաքի տակ պահուած կայծ մը զոր հով մը կը բորբոքէ: Նո ալ կը հաւանիմ ասոր, և որովհետև հաւատքի կոխները երկնային պատիժ մը կրնան սեպուիլ և մասնաւորապէս մեր ազգին համար մահաբաւ հար-

(1) La mémoire est l'imagination du passé.

ամենքեր են, կը մնայ անաչառ կերպով քննել թէ՛ ո՞վ է այն զրգուիչը և ո՞ւսկէ կուգայ այն նրաշունչ լսատուութիւնը որ այնքան հայ սիրտեր բռնկել տուաւ: Մարդ չկրնար յանդգնիլ ըսելու որ Արեւիկը եղաւ այն զրգուիչը. կոյր ըլլալուէ մէկը որ հաստատուէ թէ հոնկէ ելաւ փոթորիկը: Անոր համար կը սխալիք, մետաքսաբան Եփէնտի, երբ ձեր յորդորը ինձ կ'ուղարկէք և զիս կը խրատէք, ձեր չափը մոռնալով, որ ետ քաշուիմ: Եթէ ձեզի նման Եփէնտի մը զրկէիք դայն աւելի շիտակ ձեր նախատա-
կին կը հասնէիք, վասն զի լաւ գիտէք թէ ո՞վ են Տատեան Պօղոս աղային տեսարակը զրոյզ և նրբագրողը, այլ մանուսանդ սրբագրողը... Ի՞նչ կ'ըսէք, տատաւածաբան Եփէնտի, բարոյական սրտասխանատուութեան ըստ-
ւեր մը չէք նշմարեր՝ ձեր վրայ կամ բոլորտիւրը... և եթէ կը նշմարէք ինչ իրաւունքով Արեւիկին շարագիւրը կ'ուղէք արատել...: Ասիկա հինգ ամիս լսելէ ետեւ աս-
պարէզ մտաւ և այն՝ (ականջնիդ բացէք որ լաւ մը լը-
սէք) ուրիշներու կտակով: Խրատատու Եփէնտի ինչո՞ւ
այդպէս չգիտնալու կը դարձէք, ընդէր աչիկայ կը ձե-
ւանաք երբ ձեր սրտաշունթիւնը՝ առակ եղեր է...
տեսակ մը կոյրներու մէջ: Այսքան չքմեղութիւն, այս-
քան համեստութիւն տաւ և հինգ տարեկան օրիորդի
մ'անգամ չվայելէր ծնդ թէ հիւօրեայ անձի մը որ տիր-
ջօնարի համբաւ ունի... իր բարեկամներու քով: Ես
իմ անսիրտ խելքովս Տատեանին, Այվադովսքին և
ուրիշներուն ձեռագիրները սրբագրողը ճանչցայ և դուք
զիս չկրցաք դանկիւ գտնել և յորդորել որ հաւատքի
կրօններ յուզելէ հրաժարի: Շիտակը այս՝ ձեր հեռա-
տեսութեան պատիւ չընէր:

Իզմէ խնդրել էին, յանուն ազատութեան, որ բողոք-
ներ հրատարակեմ օրագրին մէջ: Այլ եթէ չխնդրէին
անգամ հայրենական սիրոյ սրբաք մ'էր այսպիսի
ամենի հրդեհին առջև անդգայ հանդիսատես չմնալ:
Կամբ ըրի այս սրբաքս խղճիւ կատարել և յետին ճի-
շտ ծախել որ կրօնական այս շփոթը վերջին ըլլայ:
Համոզուած էի, մետաքսաբան Եփէնտի, և եմ տակա-
ւին որ, մեր ազգային վէճերը մէկ կերպով կրնան շն-
հեալիլ, — վիճելու ազատութիւնով: Բանակաւու մը
խափանել դայն յարատեւելէ և տնաւ անոր համար է որ
Պօլիսի կրօնական մօլի ետանդը միշտ կը վխտայ և
օտարներէն ջնորհուած ազատութիւնը հայու ձեռքով
կ'սպաննուի: Հայերուն առաջին ծշնամի Հայերն են:
Դանդաղաբար իրաւունք չ'ունին, վասն զի զանգատը
կ'ենթադրէ օրէնք և հայերուն համար քանի մը մարդու
կամբը օրէնք կը սեպուի և իբրև այն մոլեռանդ բազ-
մութիւնէն կը պաշտպանուի:

Ձեր յարգածիւնը իմ ըրածներէ կը դժգոհի և կը ժախ
խրատել որ ետ քաշուիմ ու առակ նշաւակի ըլլամ
հեղինակը հանդիսականներու առջև: Ուստի կը յան-
դգնի գրելու. « ձեր լրագրոյ բերանը փոխեցէք »:

Բայց, խրատատու Եփէնտի, ինչ յարաբերութիւն կայ
ձեր և իմ մէջ որ կուղէք իբրև տէր ան ծառայ խօսիլ
և տմարդի երեւիլ երբ ամէն մարդ կը հաստատէ որ
ազատամիտ յղկութիւն ունիք: Արեւիկին ոչ ճիմնադիր
էք, ոչ բաժին մը գրուած էք, ոչ ստորագրութիւն մը
առած էք և ոչ աղեկութիւն մը ըրած ունիք, ինչպէս կ'ը-
լայ ուրեմն որ ազատ հանգէսի մը բերան փոխել տալ
ուղէք և ինչ իրաւունքով կը համարձակիք զիս դատել:
Այս ամէն սահմանէ կ'երնէ և ուղղակի իմ սրտիւս կը
դաչի, վասն զի ես եմ պատասխանատու անոր բերնին
և չեմ ներել որ Եփէնտի մը ազատ հայու գրէ « բերանդ
փոխէ »: Ասկէ դատ բերանդ փոխէ ըսողը բերան մը
տալու է: Մի՞թէ այս ըսողը իր բերնի մարքութեան վը-
րայ այնքան վստահութիւն ունի որ ուրիշի մը կը նը-
փրէ դայն...: Ա՛հ, եթէ Արեւիկին շարագիւրը օրիորդ
մ'ըլլար կարելի է թէ՛ այսպիսի նուէրէն անոյշ հետե-
ւանքներ ծագէին և... սէր հոսեր անկէ:

Այս ալ չբաւէր. կը գրէք թէ՛ « որ և իցէ կրօնական
բանակութիւն չ'ընէիք » . այսինքն ոչ միայն հիմա այլ և
յապա չէք թողուր որ այս ասպարէզի մէջ մտնեմ, այս
ինքն միտքս գերի է այս Նիւթի վրայ: Վերստին կը
հարցնեմ, խրատատու Եփէնտի՛, ինչ իրաւունք ունի
անձանթ մը այսպիսի խրատներ գրելու ինձ որ Թրանս-
սայի մէջ ճշմարիտ նախատիւնք են բանասերի մը համար:
« Մի միայն բարեկամական աղարարութիւն մ'է այս,
կը յաւելուք, և բանի տեղ չ'ընելու ալ խօսք չ'է »: Որո՞ւ
կը գրէք այսպէս, մետաքսաբան Եփէնտի, մեր ենք և
ինչ ազգի մէջ կ'ապրինք. մի՞թէ Պօլիս կը կարծէք զձեզ
և Արեւիկը տեսակ մը հայ լրագրի կարգը կը դասէք:
Բայց յիշելու է որ Բարիկ ենք և Արեւիկը Թրանսսայի
օրէնքովոյս կը տեսնէ: Հոս օրէնքը մի է. կ'երեւա-
կայեմ թէ՛ գոնէ լսել էք, և դուք և ես հաւասար ենք
օրէնքին առջև:

Երբ այս օրէնքը ազատութիւն կուտայ ինձ, ինչո՞ւ
դայն չ'ալիտի վայելեմ և ազգիս օգտին համար գործ
ածեմ, ինչպէս կ'ուղէք որ ձեր կամբը օրէնքէ վեր բը-
նեմ և մոռնամ հաւասարութիւնը որ ազատութեան ոգին
է: Բաց ասկէ, գիտնալու էիք որ անուղղակի սպառ-
նալիք և բարեկամութիւն իրարու հետ չ'են կրնար միա-
նալ երբ ինձ կ'ուղարկուին անոնք: Ուրեմն ներելի է
ինձ երբ ես ալ համարձակիմ ձեր բերանը առնելով ըսել-
նամակնուդ « բերանը փոխէք » ուրիշ անգամ ինձ գրե-
լու տալն: « Մի միայն բարեկամական աղարարու-
թիւն մ'է այս և բանի տեղ չ'ընելու խօսք չ'է »: Ի՞նչ կ'ը-
սէք, մետաքսաբան Եփէնտի, իրաւունք ունիմ եթէ ոչ
ձեզի րեղան տալու:

Կը գրէք նաեւ թէ՛ դուք միայն ձեր կարծիքը չ'էք յայտ-
ներ, այլ շատերու փափագին արձագանք էք: Ո՞վ են
այս շատերը. մարդու մ'անուն չ'էք տար և ես կը բը-
նազատուիմ երեւակայել որ այս անձանթ խրատատու

մարդերը շինծու հնարք մ'են զիս համոզելու համար, եթէ ոչ հաւատարի եմ որ կը փութայիք անուանել զոսոնք և ձեզի նման բարեկամներու թիւը աւելցնել, որպէս զի բոլորովին ապահովուիմ և « բարեկամական ազդարարութիւնէ մը » օգուտ բաղեմ։ Կարծեմ թէ, խճարատաւոր Էֆէնտի, « այս ալ բանի տեղ չզննելու խօսք չէ » երբ կը հարկադրուիմ « լրագրի մը բերան փոխել » ազատասէր հիմնադիրներու կամքին հակառակ։

Սակայն ենթադրենք որ ձեր այս բարեկամութիւնը ճշմարիտ և անարատ ըլլայ, բայց այն ատեն իրաւունք ունիմ ձեզ հարցնելու, հապա ինչո՞ւ միեւնոյն օրը, միեւնոյն վայրկեանի մէջ, միեւնոյն սուրհանդակով ուրիշ նամակ մը կը գրէք առ տպագրիչ Սրենկըիս խնդրելով որ կրօնքի վերաբերած վէճեր տպելէ զգուշանայ և այն Սրենկըիս ելնելու յետին օրը, յետին ժամը և երբ իր շարադիրը հիւանդ կը պառկէր և ելլալու համար չէր ունենար... Ինչպէս կ'ըլլայ որ այս ետքի նամակը ամէն հայտ ձեռք կ'իյնայ և ձեր « Ազդարարութիւնը » կը հրատարակուի... Զ'եմ գիտեր և գիտենէլ չ'եմ ուզեր ամենեւին. միայն՝ կը պնդեմ թէ՛ այսպիսի ազդարարութիւն կամ խրատ ոչ բարեկամութեան նշան է և ոչ մարդութեան։ Իբրեւ համազգի կարելի է որ զոյգն իրաւունք ունենայիք ինձ խրատ տալու, բայց երբ այն խրատը կը հռչակուի և հրատարակուի կ'ըլլայ, ամէն իրաւունք կը կորուստնէք և տեղի կուտար հրապարակաւ բողոքելու. վասն զի հրատարակու ազդ անեն՝ յանդիմանել է և էֆէնտի մը չ'եմ ներեր որ յանդիմանութիւն տայ ազատ հանդէսի մը առաջին շարագրին։ Բարիդի մէջ տպուած հայ օրագիր մը ուրիշներէ վար չ'մնար ի պատուոյ մասին և Պօլսեցիի մը « ազդարարութիւնը » և յանդիմանութիւնը յիշուի « բանի տեղ չզննելու խօսք » են օտարազգի ուսումնականներու առջև։

Նաև այս ծնող մէկ զի մնայ։ Կը գրէք որ այս « ազդարարութիւնը » չ'էիք տար « թէ որ լաւ մը գիտցած չըլլայիք ձեր համամիտ և համակարծիք ըլլալնիդ »։ Բայց, մետաքսաբան Էֆէնտի, կը մոռնաք ըսելու թէ՛ որո՞ւ համամիտ եմ և ինչ պարագայի մէջ համակարծիք կրնամ գտնուիլ։ Մի թէ քաղաքականութեան եթէ փիլիսոփայութեան մէջ իրարու համամիտ ենք, մի թէ մեր բարոյականը կամ ուրիշ գրութիւն մը ոյսպիսի նշոյնութիւն մ'ունին. մի թէ գիտութիւնով կամ նախապաշարումով համակարծիք ենք։ Այսպէս գրելու համար պէտք է որ մարգարէութիւն ունենաք կամ անհիմն ենթադրութիւն մ'ընէք, վասն զի զձեզ չ'եմ ճանչնար (կրկնեմ որ միտքերնիդ մնայ). մէկ անգամ միայն զձեզ տեսեր եմ և այն՝ երբորդի մ'առջև և շատ քիչ ժամանակ։ Գիտե՞ք արդեօք ինչ փիլիսոփայութեան կը հետեւիմ, ինչ մարդիկու կարծիքը կ'ընդունիմ, ինչ գրութիւն ընտրեմ եմ, ինչ քաղաքական դաւանութիւն կը պաշտեմ, ինչ բարոյականի կը ծառայեմ թէ ընտանի և թէ մարդկային իրերու

մէջ։ Ինչպէս կը լսեմ ձեր մտերիմներէ, զեռերեկ սկսեր էք փիլիսոփայութիւն զաս առնուլ և հազիւ թէ Պարոն Գուգէնին զիրքերը կրնաք լուծել։ Ուստի հաւատարի եմ որ, փիլիսոփայութեան մէջ, համամիտ չ'ենք իրարու, վասն զի Պ. Գուգէնին բանաբաղումը կը մերժեմ և որչափ յարգեմ զինքը իբրեւ հեղինակ, իբրեւ փիլիսոփայ չ'եմ ճանչնար իր իշխանութիւնը։ Ձեր գրութիւնը, եթէ գրութիւն ունիք դուք, ճանկատանի շատ խմատ... ասէրներու պէս աստուածաբանութեան տեսիլներու հիւս մը պիտի ըլլայ։ Յայտնի կը խոստովանիմ որ աստուածաբան չ'եմ և ըլլալու ալ փափագ չ'ունիմ ամենեւին։ Հոս ոչ միայն « համամտութիւն » մը չ'երեւիր ինձ այլ և կոտորեալ հակամտութիւն կը տեսնեմ։ Աստուածաբան Էֆէնտի ասոր վրայ մի տարակուսիք բնու, վասն զի ի մանկութենէ անտի սեպարտիստներէ հեռու սպեր եմ։ Կրօնքի մասին մէջ ալ համամտութիւն մը չ'եմ տեսներ։ Գուրբ վառք կը սեպէք ձեզի Սյվադովսքիին հետ կապուիլ, անոնց ձեռքով շարժիլ և գործ տեսնել, ես զանոնք միահամուռ կ'ատեմ և չ'եմ ուզեր ոչ ի հեռուստ և ոչ ի մօտուստ յարաբերութիւն մը ունենալ անոնց հետ։ Լուսաւորչեայ ծներ եմ և այն գրողով պիտի մեռնիմ, բայց թողտուութիւնը ինձի համար ուրիշ միտքութիւն մ'է զոր Եւրոպայի մէջ առի և զոր անհնարին է ուրանալ, վասն զի թողտուութիւնը միտքի ազատութիւն է և ազատութեան ամէն տեսակ մասունքը կը պաշտեմ հաւատքի չափ։ Սյվադովսքիին պէս մարդու մը բարեկամը ինձի « համամիտ և համակարծիք » չ'կրնար ըլլալ։

Քաղաքականութեան մէջ դուք թագաւոր և նշանաւոր անձերու կը ծառայէք, ես ազատ եմ և մինչև հիմա մարդու մ'առջև ծուր չ'եմ դրեր։ Զ'էք կրնար ուրանալ, փիլիսոփայ Էֆէնտի, որ ծառայութեան և ազատութեան մէջ բաւական տարբերութիւն կայ և զմեզ անմիանալի կերպով կը բաժնէ։ Գուրբ ազատ էք ծառայելու ինչպէս և ես ազատ էի, եմ և պիտի մնամ, չ'ծառայելու... Եթէ Էֆէնտիութիւնը պատուանուն մ'է ձեզի համար, անկախութիւնը ոչ նուազ պատուանուն է ինձի համար։ Գուրբ ձեր Էֆէնտիութիւնը պահեցէք և անով ուղածնիդ չափ փառաւորութեցէք բայց մի գաք կ'աղաչեմ, յանուն բարեկամութեան, մեր անկախութիւնը թշնամանելու։ Այս՝ աններելի է որ և իցէ մարդու և մանաւանդ ձեզի՝ որ Բէշիտ բաշային արարածներէն մէկն էք։

Գիտութիւնով ալ բնաւ ամենեւին համակարծիք չ'ենք, դուք մետաքսաբանութիւնը կը մշակէք և անոր վրայ զիրք մը կը շինէք... Թրինակելով։ Սո ժամանակաւորիչ մը բուժական արհեստին հետեւեր եմ մարդուն կազմը հասկնալու քան թէ մարմինը դարմանելու համար։ Ստուգիւ չ'եմ հասկնար ինչպէս համակարծիք կրնանք ըլլալ. եթէ բժշկութիւն սովորելու ալ սկսեր էք յայտնե-

ցէք որ ամէն տարակոյս վերնայ և ձեր համամտութիւնը տեսնուի :

Այլ մնայ բարոյականը. ո՛հ, հոս, կարծեմ, իրարու կռնակի զարծնենք: Լեզուի բարոյականին չեմ հաւտար կամ եթէ հաւտամ այնքան հեռու կը խորշում անկէ որ անոր շունչը զգալ ծանր է իմ սրտիս : « Բարոյականը միտքին և բարոյականութիւնը սիրտին մէջ է » (1) ըստ հեղինակ մը և երբ միտքով և սիրտով տարբեր ենք կարելի է արդեօք որ « համամտ և համակարծիք » ըլլանք այս պարագայի մէջ...:

Այս ամենէն կը հետևի, մետաքսաբան Էֆէնտի, թէ՛ լինի կայ ձեր և իմ մէջ. անոր համար լաւ մը չեմ ըմբռնէր այն համամտութիւնը զոր կը հաստատէք ձեր նամակով և զոր կուրանամ ի բոլոր սրտէ և ի լուր աշխարհի :

Ազգարարութիւնէն ետքը կ'ըսէք նաև. « Թէ որ յորդորս կամ առաջարկութիւնս ի գործ դնելու ըլլաք, յիշատի գոհ պիտի ըլլամ և արդէն իսկ շնորհակալ ալ կ'ըլլամ » : Ուսկէ կը հետևի որ եթէ ի գործ դնելու չ'ըլլամ այս առաջարկութիւնը դժգոհ պիտի ըլլաք : Դժգոհութիւնը կը տանի ի թշնամութիւն և ասկէ կրնան ծագիլ... այլ և այլ գէշութիւններ : Աղչարիմ որ ձեր « ազգարարութիւնը » մերժելով դձեղ մինչև ի թշնամութիւն մզելու առիթ եղայ : Ահա ձեզի այնպիսի վիճակ մը որուն զաղդիացիք կ'ըսեն (ami-ennemi), և դուք ինձի դեմքը էիք միայն ձեր անկեղծ բարեկամութիւնը շնորհելու համար... Ի՞նչ համամտութիւն...: Այլ վապագէի որ ոչ թշնամի ըլլալիք և ոչ բարեկամ, վասն զի սեւին երեսը՝ Շամլին շէքերը ատել կուտայ : Այլ վապագէի նաև որ սող մը չգրէիք ինձի որպէս զի չհարկադրուէի ձեզի այս երկար զիրը զրկել. բայց ինչ ընեմ ո՞վ որ ինքրեն կ'իյնայ՝ ոչ լայ, կ'ըսեն, և դուք կամաւ ինկաք խրատատու Էֆէնտիի վիճակի մէջ :

Ձեր նամակը կ'ստորագրէք. « ողջ լնի, ի սէր Յակոբիս Առնիկեան » : Արեջին անգամ կ'ըսեմ դձեղ ճանչնալու սրտով և կարգէ դուրս կը զարմանամ երբ կը տեսնեմ որ իբրև սա մտերիմ կամ ընկեր կամ սիրտնի մը գրելու ո՞հ կ'ընտրէք : Ի սէր... մարդավարութեան « բերան փոխելու է » աղնի Էֆէնտի, վասն զի ձեր ճշմարիտ բարեկամները կրնան զայնակիլ այնպիսի ընտանութիւնէ մը : « Թէ որ այս յորդորս ի գործ դնելու ըլլաք գոհ պիտի ըլլամ և արդէն իսկ շնորհակալ ալ կ'ըլլամ » :

Ատուտաժառան Էֆէնտի զիտէք որ խրատ տալը լռելեայն կ'ենթադրէ ուրիշէ խրատ առնուլ. անոր համար ապահով եմ որ չպիտի բարկանաք եթէ ես ալ համարձակիմ վայրկեան մը խրատատու ըլլալ իմ կողմէ : Ծանր է ինձ հրապարակաւ խրատել ձեզի պէս մեծ փի-

լիստիայ մը, այլ ձեր կերպը կը հարկադրէ որ ուրիշ կերպով չվարուիմ : Նախ՝ լաւ կ'ընէք ձեր պաշտօնը հանդարտ կատարել և ձեզի չվերաբերուած խնդիրներու մէջ չնետուիլ. « Միմիայն բարեկամական ազգարարութիւն մ'է այս և բանի տեղ չդնելու ալ խօսք չէ. » վասն զի ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել : Այլ հասկնաք ինչ ըսել կ'ուզեմ և մեկնութիւնը աւելորդ է : Ներկորդ պէտք է զխոնել որ բարեկամութիւնը ազգայական խաղալիք չէ և բարեկամ եմ ըսելով մարդու հոր փորելը ուրիշ անուն ունի Ներոպայի մէջ : Բարեկամութեան առաջին թէնութիւնն է անկեղծութիւնը և այս թէնութիւնը դուք ոտքի տակ կ'առնուք. և երբ « պարտ անձին վարկայ պարտ սիրահամբոյր սիրով յորդորել... » կը գրէք ու մեր տպագրիչին հետ խօսքը մէկ կ'ընէք, անմահ շարականի մը տողերը միտքս կուգան և սրտաբէկ կը կրկնեմ :

Ո ՀԱՄԱՐՈՒՄ, ՄԱՏՆՈՒԹԵԱՆ ՆՇԱՆ ԵՒ ԱՌԻԹ ՄՍՀՈՒ :

« Այնպիսի կանոններով և օրէնքով վարուէ, ըստ Քանդ, որ կարենաս ուղել որ անոնք իբրև ընդհանուր օրէնքներ հաստատուին թէքեղի և թէ բոլոր ուրիշ մարդերու համար. » (Agis d'après les règles ou les maximes telles que tu puisses vouloir qu'elles soient érigées en lois générales pour toi et pour tous les autres hommes) : Եւ որովհետեւ փիլիսոփայութիւն կը սովորէ, այս անմահ հանճարին տեսիլները քիչ մը որոճէք նէ գէշ չ'ըլլար : « Թէ որ յորդորս ի գործ դնէք յիշատի գոհ կ'ըլլան » այն ամէն Հայերը որք ձեզի հետ յարաբերութիւն ունին : Ներորդ՝ կրօնական խնդիրներէ զգոյշ եղիք. այնպիսի տէրութեան մը կը ծառայէք որ քրիստոնէայ չ'է և հետեալէս չկրնար կատարեալ վստահութիւն ունենալ այն մարդերու վրայ որք ամէն բանի մէջ կրօնք կը խառնեն : Աշխարհական մը և պաշտօնաւոր մը կը սեպուիք, թող տուէք որ բանանները իրենց պաշտօնը կատարեն եկեղեցիի մը մէջ ինչպէս դուք կը կատարէք ձերինը դեսպանատունին մէջ : Չորրորդ՝ հայրենակիցներու հետ վարուելու և ազգային նիւթերու վրայ խօսելու ատեն, երկդիմի կերպիւր և երկկեղու առաջարկութիւններ ընել անվայել է. քիչ մարդ կը խաբուի այնպիսի լեզուէն և աւելի քիչ մարդ կը համոզուի այս կերպերէն, մանաւանդ թէ խաբուող ի վերջէ բանը կ'իմանայ և կատակը կ'սկսի ձեր բոլորալիքը... : « Աս ալ միմիայն բարեկամական ազգարարութիւն մ'է. » ուղեքնէ ի գործ դրէք եթէ ոչ ազատ էք : Հինգերորդ՝ միտքի ազատութիւնը քիչ մը աւելի պաշտելու է. վասն զի եթէ դուք համոզումի մը տէր էք, ինչպէս ոմանք կը համբաւեն, ձեր հակառակորդը համոզումէ դուրի չ'է և համոզում մը որ ուրիշին համոզումը կը նեղէ բռնութիւն կ'առնանի, և փիլիսոփայութիւնը, ճշմարիտ փիլիսոփայութիւնը, այն՝ զոր պէտք էր սովորի, այս բռնութիւնը չ'ընդունիր վասն զի ազատութեան

(1) La morale est dans la tête et la moralité dans le cœur.

զուտոր է : Այս միտքի ազատութիւնը կ'ենթադրէ խօսելու և գրելու իրաւունքը զոր ամէն մարդ ունի և կարծեմ ես ալ անկէ զրկուած չ'եմ Հայըլլալովս : Ի՞նչ կ'ըսէք, մետաքսաբան Էֆէնտի, հայ ծնելով գերի ծներ եմարդ-ւօք որ մէկ յօդուածի մը համար մամուլի ներքեւ ճընշուեցայ երկու տարի ... : Եթէ այս միտքի ազատութիւնը չ'ազատէր զխանսը որ ի դուր կ'աշխատէր փիլիսոփայութիւն սովորիլ : Եթէ ինձի չ'էր հաւտար ձեր վարժապետին հարցէք, և կը համոզուիք որ աս ալ « բանի տեղ չ'ընելու խօսք չ'է : »

Եթէ այս խրատները, զորս ակամայ կուտամ, ի գործ դնել հաճիք կրնաք փիլիսոփայ ըլլալ, և գուցէ ես ալ, որ մը, ձեր բարեկամութեան հաւտամ ու « բերանս փոխեմ... Ի ՍԵՐ ՅԱԿՈԲԻ... : Բայց մի մոռնաք երբէք որ փիլիսոփայութեան սկիզբը իր չափը ճանչնալն է. connais-toi, toi-même.

Գանգատեր էիք, խրատատու Էֆէնտի, որ զձեզ անսխառասխանի թողեր եմ տմարդօրէն. ահա ձեզ պատասխան մը որ երկար է, կը հաւանիմ, այլ ոչ նենգալի : Թշնամութիւնս, ինչպէս նաեւ բարեկամութիւնս, զիմակ չկրէր : Յուսամ թէ այսուհետեւ գանգատելու տեղի չ'մնար : Պատասխանի չ'եմ սպասեր բայց եթէ ըսելիք մը ունիք Սթեֆընէն էջերը պատրաստ են ամէն բան ազատօրէն տպելու : Գիտեմ որ ազատութիւնը չ'էր սիրէր, բայց ինչ ընեմ որ բարեկամութիւն չկայ մտերմաբար և գաղտնի թղթագրութիւնը անընդունելի է մեր կողմէն :

Մնամ որպէս և էի

Ս. ՈՍԿԱՆԵՍԱՆ

Բարիք 1857 մայիս 2.

ԽԱԶՍՏՈՒՐ ԱՐՈՎՆԱՆ.

Վայ եմ ազգին՝ որ աշխարհումս անտեր ա,
Վայ եմ երկրին՝ որ քշնամու գերի ա,
Վայ եմ խալիսին՝ որ ինքն իր կեանքն, աշխարհը
չի պահպանիլ, ու հարամու ձեռք կուտայ :
(Վերջ Հայաստանի. Երես 73)

Բանք որ Պ. Աբովեանին գիրքը երկու արմէք ունի, բանասիրական և ազգային : Ազգային՝ վասն զի հեղինակը օտար ժողովուրդներու զիջողները թողլով կամք ըրեր է մեր քաջերէն մէկը ընտրել, անոր վարքը վիպական ձեւերով դարձաբերել և ազգին առջև դնել որպէս զի տեսնէ, կարգայ և սիրտի : Կ'ուզէի ազգիս խօսիլ, կ'ըսէ անիկա, Կրիստոս ծագաւորին որդոյ համրութիւնը յիշելէ ետքը, « Բայց ան, լեզուս փակ էր... բերանս բռնած... : Գանձ չ'ունէի, որ գործովցոյց տայի ուղածս, անծնա մեծ չ'էր որ ասածս տեղը հասնի, մեր զիրքերն էլ զրարատ, մեր նոր լեզուն էլ անպատիշ, որ սրտիս փափագը խօսքով յայտնէի. հրամայել չ'էի կարող,

խնդրէի, աղաչէի էլ՝ լեզուս մարդ չ'էր խմանալ, չ'ունէի ես էլ էի ուղում որ ինձ վրայ չ'ծիծաղին, չ'ասեն կոպիտաւ, յիմար ա՛ որ Քերականութիւն, հարտասանութիւն, տրամաբանութիւն չգիտի, ես էլ էի ուղում որ ասեն : « Օ՛հ կեպեա խորթ խրթին շարադրիլ գիտի, որ սատանան էլ միջիցը մէկ բառ չի կարող խմանալ, հասկնալ : » Ես էլ ուղում էի... որ ինձ վրայ դարմանան և ինձ գողանան : « Թէ հայերէն շատ խորը տեղեակ եմ : » Ավ մէկ լեզու գիտի, ես մէկ քանիսը գիտեմ. ինչ գիրք ասես՝ որ չ'եմ սկսել թարգմանիլ ու կիսատ թողուլ. ոտանաւոր, շարադրութիւն հօ՛ւ էնքան եմ զրարաւ գլխիցս դուս տվել որ մէկ մեծ գիրք էլ՝ էն կ'դառնայ : » Ինչպէս կ'երեւի Պ. Աբովեանը շատ հեռատես ազգասիրութիւն ունէր և զգալով ի վերջէ որ զրարաւ լեզուն, մոռնաւնոյ այն որ Վենետիկի Վանքին հետեւելով կը գրուի, արգելք է ըսն թէ գործի մեր առաջ երթալուն, իր զրագէտի փառքը կը զոհէ և կ'սկսի հին դրութիւններէ հրաժարիլ : Այսօր քիչ ուսումնական կայ որ իր կարծիքէն չ'ըլլայ և իր ըրածը չգովէ :

« Էս միջոցումը, կը ջարտանակէ հեղինակը, Աստուած ինձ մէկ բանի երևիւք էլ հասցրեց, որ պէտք է կարգադրէի... : Էս երեխէքանց ձեռքն ինչ հայի գիրք տալին էի, չ'էին հասկանում... : Աղում էի շատ անգամ, մաղերս պոկեմ՝ որ օտար լեզուք ասելի էին սիրում, քանց մերը : Պատճառը շատ բնական էր : Էն լեզվըներումը նրանք կարգում էին երեւելի մարդկանց գործերը, նրանց արածներն ու ասածները, նրանք կարգում էին էն բաները՝ որ մարդի սիրտ կարող է գրաւիլ, չունքի սրտի բաներ էին՝ ո՛վ չի սիրիլ : Ո՛վ չի ուղիլ թէ՛ սէրը, բարեկամութիւնը, հայրենասիրութիւնը, ծնողը, դասիկը, մահը, կոխը ինչ դատ են, բայց մեր լեզվումը՝ թէ էսպէս բաներ ըրին, թող աչքս հանեն : Էլ ընչով երեխինք ըր լեզուն սիրիլ տաս... : Բանը հենց էս էր՝ որ ասում էի միտքումս՝ թէ նստիմ ինչ բան խելքս կը բերի, մեր ազգին գովեմ, մեր երեւելի մարդկանց արած քաջութիւնները պատմեմ : »

Պ. Աբովեանը մէջ մը համոզուելէն ետեւ որ աշխարհաբաւ լեզուով պիտի գրուի այսուհետեւ և աշխարհային դէպքերը մանաւանդ՝ և ազնիւ կիրքերը ժողովուրդին միտքը կը յափշտակեն ու կ'ըզբօսցնեն, կ'սկսի հարտասանութիւնը, աստուածաշունչը մէկ զի թողուլ և բաղմութիւնը քննել փիլիսոփայի աչքով : Կը տեսնէ որ ժողովուրդը թէ ընտանի և թէ հրապարակի կեանքին մէջ այն գործերը կը սիրէ, այն կիրքերով կ'զմայլի որք հեռուէն կամ մօտէն արձագանդ են մարդկային զգայութիւններու և հայրենիքի փառքին կամ ազգէտքին : Կը տեսնէ այս ամէնը կը հասկնայ ժողովուրդը, կ'ըմբռնէ անոր միտումները, կը շօշափէ անոր վերքը, բայց կը տրամի : հայու սիրտը հայու բերան չ'ունի. « Ասածները թուրքերէն էր, շատը մէկ բառ էլայ չէր հասկա-

նում, ամա լսողի, տեսողի հոգին գնում էր դրախտը... Ազգին անհաւատ են կանչում, լեզուն սիրում. դարմա-նալու չի : Ախր՝ ով ան լսել թէ ծծմոր կաթը՝ մօր կաթիցը լաւ ըլի : » Արտումի որ օտար լեզուով և օտարին յիշատակով հայ սիրտը կ'զբօսնու և միտքը կը դնէ այս ազգաւէր սովորութիւնին դէմ զինիլ : Ա' ընտրէ ուսմիկ լեզուն և կ'աշխատի զրել ինչպէս ուսմիկը կը խօսի և այն աստիճան կը յաջողի որ ուսմիկը կարգաւորու սէր մը կ'զգայ : Ազգային գէտքերը կը ժողովէ, աւանդութիւնները ի գիր կ'առնու, գեղջուկին վարքը կը նկարագրէ, վարք՝ ուր երբեմն աւելի քաջութիւն և վստահութիւն կայ քան թէ ծագաւորի մը գործերու մէջ : « Էս օր էլ մօրատա հէնց էն ա ելել որ գնամ ընկնիմ մէկ իշխանի ոտք, ասեմ. ինձ մէկ կտոր հաց տայ ու էս՝ զիշեր ցերեկ ընկնիմ գեղէ գեղ ու մեր ազգի ըրած բաները հաւքեմ, զրեմ : »

Բայց շատ էրեւար կը համոզուի որ այս իշխանք աւելի անուն ունին քան թէ սիրտ և միշտ « սեւագլուխներուն » բոլորովը կը ծափառին, ստակնին անոնց կողման և եկեղեցի ջինկէ ուրիշ բան չգիտեն այս երկրի վրայ : Ար համոզուի որ ազգութիւնը իրեն ասպաւնէ չէ ընտրած հարուստ սիրտերը որք եթէ սրբակեր չ'են ամէն տեղ՝ դատարկ են միշտ... : Ար դառնայ ինք իրեն և հարը հատնելով իր փորձով կը բաւականանայ և իր միտքին ու անձնական ուսումին կ'ապաւինի ազգը յառաջ մղելու համար :

« Մէկ բարեկենդանի՝ աշակերտներս որ բաց ծաղի, սկսեցի՝ ինչ որ երեխութիւնիցս լսած կամ տեսած բան գիտէի, տակ ու գլուխ անիլ : Վերջը իմ ջիւան Աղասին միտքս ընկաւ, նրա հետ հարկի քաջ հայի տղերք էլ իրենց գլուխը բարձրացրեցին ու ամէն էլ ուղում էին՝ որ իրենց ոտը գնամ : Միւսները մեծ մեծ մարդիկ էին, շատն էլ զեռ հլայ սաղ սալաման՝ փառք աստուծոյ, Աղասին աղքատ և մեռած, նրա սուրբ գերեզմանին դուրբան : Ասեցի կեղծատրութիւն չ'անեմ, նրան ընտրեցի : »

Պ. Արքովեանին այս ընտրութիւնը իր անձը կատարելապէս կը յայտնէ և մեր համակրութիւնը բոլորովին կը զրաւէ : Ժամանակը եկաւ որ հայ ռաւիկին ալ զգայ որ իր ուսմիկութիւնով մեծ բաներ կրնայ ընել և ուրիշ ժողովուրդներէ վար չ'մնար թէ ազգային և թէ օտարազգի բռնաւորներու դէմ զինելու տուն... :

Մէյ մը իր քաջը ընտրելէն ետքը զժբաղգ հեղինակը այնքան անոր կը սիրահարի, իր երեսակայութիւնը այնքան կը բարբառի որ քանի մը օրուան մէջ իր զիրքին մէկ մասը կը շարագրէ : Նոր էր այս համբան իրեն համար և ինքն իսկ չ'էր գիտեր, թէ ինչ բան պիտի աւտաղղէր ուսմիկի սեռով. բայց ուսումնական բարեկամի մը հաւանութիւնը զինքը կը քաջալերէ և վէրք Հայաստանին կը շարունակուի :

Տրտում սիրտով դայն կարդալէն և ծամերով մտածելէն ետք Հայերուն հակառակորդին վրայ, կը գոչենք հեղինակին հետ. « Ա'իս սիրելի հայ՝ էս բաները լսելիս, ինչ ունիս չունիս տուր որ քո ազգը քիչ քիչ մէկ լաւ օր քաշի : »

Անհնարին է այս գիրքը դատել երոպական կանոնով, վասն զի, ինչպէս ըսինք, ռամիկներու համար և ուսմիկի սեռով գրուած է այն և իբրեւ զրական շէնք մը չ'ընծայուի մեր առջև : Պ. Արքովեանը յառաջմէ դայն կ'զգայ և ներում կը խնդրէ : « Դու իմ պատուական ազգ՝ քո սրտը բերանը, քո որդոյ խակ լեզուն սիրես, ինչպէս հէրը իր մանուկի կըմկմալն, որ աշխարհի հետ չ'փոխիլ : Երբ որ կ'մեծանամ, խրթին լեզուով էլ կը խօսանք : »

Գերմանական հապաղութիւն մը, շատ կրկնութիւններ և ասիական առաւելութիւններ կը տիրեն հոն, բայց այս պակսութիւններու քով, հայրենական վառվռուն սէր մը, հնարաւոր էրեսակայութիւն մը և նուրբ գիտումներ կը գտնուին զրեթէ ամէն էջերու վրայ : Անհնարին է աւելի ճիշդ պատկեր մը ջինել հայերու ընտանեկան և կրօնական կեանքը ներկայացնելու համար : Կարդացողը կարծես թէ Հայաստանի զիւղերու մէջ կը փոխադրուի և համարին եղբայրներու սրտգոծեան, զո՞նք չ'քաւորութեան, երբեմն ալ սոսկալի աղէտներու մասնակից կ'ըլլայ : Տեղ տեղ այնպիսի մանր և փափուկ նկարագրութիւններ կան որ Պաղաքի կամ Էծմէն Սիւի գրածներէն վար չ'են մնար և վիպաբանի ծանկազին տաղանդ մը կը յայտնեն : Այս զիրքին շնորհիւ վերջապէս վտարանդի հայ մը կրնայ գոնէ տեսիլ մը ունենալ ազգային բարբիւն, սովորութիւններու և վիճակին :

Չենք գիտեր որ բանասէրը ըսաւ թէ՛ առանց աւանդութիւններու զրականութիւն չկայ, և մինչև այսօր հայերէն զիրքերու մէջ կրօնքի խնդիրներէ և պակասաւոր կամ չոր ժամանակագրութիւններէն ուրիշ բան չ'են տեսնուի : Այս շատ դարմանալի և տրամալի երեսուց մ'է, վասն զի երկրի վրայ քիչ ժողովուրդ կը գտնուի որու գլխին աւելի մեծ դէպքեր անցած ըլլայ ինչպէս մեր ժողովուրդը : Հայք ոչ աւանդութիւններէ դուրի են, ոչ քաշերէ և ոչ բնական հանճարէ, բայց կրօնամոլ եռանդ մը միշտ խաւարեր է իրենց միտքը և հիմա ոմանք հողի կը հասկնան թէ կրօնքը չ'արգիլէր որ ազգ մը աշխարհային զրահանութիւն, փառք և բարբառ ունենայ... :

Պ. Արքովեանին ըրածը, եթէ ուրիշ ուսումնականներէ շարունակուի, կրնայ վերջ դնել մեր մտական աղքատութեան և փոխանակ սնոտի կամ օտարազգի գրութիւններու տոհմային զրագիտութիւն մը հաստատել : Ժողովուրդին սիրտը՝ անոն գրագիտութեան աղբիւրը. իր անցեալը և աւանդութիւնները անոն գրելու նիւթերը. ազգ և մարդկութիւն անանպատակ ուր հշմարիտ բանա-

սէրը կ'աշխատի ուղղիլ և իր հետ տանիլ բաղձնութիւնը որտեղ անգամ է։ Դիտենք որ դժուարութիւնը մեծ է և տեսակ մը կրօնաւորք, պաշտօնական տեսակ մը հայերէ, դեռ երկարատեւն պիտի աշխատին ճնշել և հալածել ազատ միտքերը և հանդարտ չծողուլ որ բան մը արդիւնատուրէն։ Երանի թէ Պ. Աբովեանին դիտաւորութիւնը հասկցուէր և իր շաւիղը մնար ազգին մէջ, բայց...

Պ. Աբովեանը իր գիրքին մէջ կ'ըսէ. « շուրջ դարիդուս չի գնալ, սիրելի, չի։ Ճամբէն գտիր, առում սըրբիք, քար ու քոյ դէն ածա, տեսնեմ' թէ շուրջ ինքն իրան կգնայ, թէ չէ։ » Հայերը թող մէջ մը միտքերնին դնեն որ կրօնքով միայն լուսաւորութիւն, ազգութիւն, զրուգիտութիւն չ'ըլլար. ուրիշ համբայ մը կայ, հարկ է որ հոն ուղղին եթէ կուզեն որ հայ անունը նորէն փառաւորուի երկրի վրայ։ Արօնաւորները բաւական երկնային փառք տուն մեզի քիչ մ'ալ երկրային անուն շահելու է...

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Մեր երկրորդ թիւին մէջ հրատարակած « Նոր ընկերութիւն մը » անունով յօդուածը ազգի ազգի տպաւորութիւն ըրեր է հասարակութեան վրայ։ Մոլի եռանդը սկսեր է կատարիլ և փրփրիլ. կը ճանչնանք զինքը և կը թողունք իր կատաղութեան մէջ։

Ինչ որ ըսեր էինք մեր ներքին համոզումի արձագանգ էր և չ'էինք կարծեր թէ' մոլեռանդներէ դատ, պիտի գտնուի կրօնաւոր մը որ հոն ակնարկութիւններ տեսնէ իր շինելիք կամ շինած ընկերութեան վրայ։ Նաեւ թըշումի մը կրնայ վկայել, թէ մեր յօդուածը կրօնական միտքով զրուած չ'էր և կատարեալ ժեղուիթ ըլլալու է մէկը որ դայն առիթ բռնելով և անոր խօսքերը այլայլելով երթայ ազգայիններու առջև պարծի և փառաւորուի։ Վախճանք նորէն հարկ պիտի ըլլայ այս կրօնաւորը հրապարակաւ դատելու փասն զի մեր երկայնամտութիւնը փոխանակ համեստութիւն տալու իրեն, զինքը ուղղակի ի բանասրկութիւն կը տանի։ Բայց թողունք զանիկա ևս այսօր և նայինք մեր աշխարհական ընթերցողներու կարծիքը։

Սխեռաց ընկերութեան վաղեմի անդամ մը կը գրէ. « Այն իրաւունք ունիք ըսելու, թէ եկեղեցականի մը թշնամութիւնը առիթ եղաւ մեր կործանման. բայց հաւատալիք եղիք որ այս թշնամութիւնը միայն կարող չ'էր դմեղ լուծելու, եթէ սոսկալի հրդեհի մը աղէտքը առի մը մոլորի չ'ընէր Իզմիրի Հայերուն բարօրութիւնը։ Թշնամի մը հարուածէն ինկանք վերաւոր, չ'ենք ուրաշար դայս, բայց նորէն կանգնիլ մեզի դիրքին էր, եթէ բոլոր մեր հասարակութիւնը տարիներով չ'ըլլէր աստ և անդ... »

Համազգեաց ընկերութեան անդամներէն մէկը կը գրէ քանի մը ընկերներու կողմէն. « Միլանոսի յօդուածը ազգու կերպով շարժեց զմեզ։ Շնորհակալ ենք որ համարձակեցաք մեր անուան վրէժխնդիր ըլլալ։ Հաստատեանք ըրած վատութիւնը անոնք միայն լուսնի տեսնող մեզի մարտակից եղեր են և դուք ևս հաղիւ թէ կրնաք երեւակայել մեր քաջածնէրը...։ Մեզի համար պիտի ըսուի ինչ որ Նաբոլէօն Ա. կ'ըսէր դժբաղդ պիտուորներու առջեւէն անցնելու ժամանակ. Honneur au courage malheureux։ »

Առջինին կը պատասխանենք. դիտաւորութիւն չ'ունէինք Իզմիրի Հայերը մեղադրել և ըրածնին վախկոտութիւն սեպել։ Մեր յօդուածը թիւր հասկցուեր է մեզի նամակ զրոյէն։ Հրդեհէն առաջ ընկերութեան հիմը խախտուած էր և յոյս չկար որ հարուածին դիմանայ։ Թող լաւ մը յիշէ ամէն պարագաները և կը համոզուի որ կրօնական թշնամութիւնը մինչև խմատութիւն գացիր էր...

Երկրորդին կ'ըսենք. Համազգեաց ընկերութիւնը գովելով մեր պարտքը կատարած եղանք և որչափ որ կիսատ ըլլան մեզի պատմութեան կրնան մեզի ճիշդ տեղեկութիւններ տալ անցեալին վրայ։ Մեծ տրտմութիւն էլսել որ յոնուն կրօնքի այնպիսի կիրքեր երեւան կ'էնեն որք նոյն կրօնքին էութիւնը կ'սպառնան։ Այս' տեսակ մը անճաստպանութիւն է որուն վրայ ազատ միտք մը կը բռնադատուի խորհիլ և աշխատիլ որ կրօնքը զո՞ն չ'ըլլայ կրօնաւորներու մոլեգնութիւնէն։ Ինչ օրերու հասանք. կրօնաւորք օժտում և երկպառակութիւն, նախատինք և թշնամութիւն կը քարոզեն և ժողովուրդը կը վրդովեն, և աշխարհականք միտութիւն, ընկերութիւն այսինքն սէր հաստատելու կ'աշխատին։ Եթէ քրիստոնէութիւնը սէր է, ո՞վ է ճշմարիտ քրիստոնէայ, ո՞վ է քրիստոսի աշակերտ, այն որ կ'անիծէ, կը բանադրէ կամ այն որ կը փախազի ընկերութիւն մը սիրով կապել և բարութիւն ընելու զբաղիլ։ Հասարակութեան կը թողունք ասոր պատասխանը։

Համարառու Տըլէդր.

Ի ԲԱՐԻՉ, ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

Paris.— Typographie Arménienne Walder, rue Bonaparte 36.

Ա Ր Ե Ի Մ Ո Ի Տ Ք

ԱՐՁԱԳԱՆԳ ԵՒՐՈՊԱՅԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ.

Ա. Տարի. Թիւ. 8 Հրատարակի ամիսը երկու անգամ. տարեկանը ֆան ֆրանկ է : Գործակալը. — Բարիզ, Արգոյ Քեմքիպեան, 23, rue de Fleuras. 1859 Ապրիլ 15.
— Պոլիս, Արգոյ Օֆտէն. — Բզմիր, Արգոյ Ալիիարեան. — Եգիպտոս, Արգոյ Տէր Դասպարեան Եղբարք :

ՄԱՆՈՆ ԼԷՍՔՕ.

ՄԱՆՈՆ ԱՌԱՋԻՆ.

Կը պարտաւորուիմ ընծերցոյը կեանքիս մինչև այն ժամանակը տանիլ որ առջի անգամ համդիպեցայ ապակե տէ Կրիէօին, Սպանիա երթալէս զրեծէ վեց ամիս առաջ : Որքան որ տաւանձնութիւնէս ելնելու մեծ սովորութիւն չ'ունէի, սակայն կը հարկադրուէի երբեմն, աղջիկիս հաճելի ըլլալու փափագով, քանի մը սղտի համբորդութիւններ ընել որք, ինձ կարելի եղածին չափ, երկար չ'էին տեսեր :

Օր մը Բուանէ Լա կը դառնայի. աղջիկս աղաչէր էր որ հոն երթամ և Նօրմանտիայի քայրքանդէն պաշտպանութիւն ուղեւ ժառանգութեան վերաբերած խնդիրի մը համար, ժառանգութիւն քանի մը երկիրներու որ մայրական պապիս կողմէ ինձ խնդրէր և զոր ևս անոր պարգեւներ էի : Կրկին Եվրէօ քաղքի վրայէն զալով՝ առջի զիշերը հոն անցուցի և երկրորդ օրը հասայ ճաշելու համար ի Բասի, որ անկէ հինգ վեց մղոն հեռու է : Այս զիւղը մտնելու առեն զարմանք մ'առաւ զիս երբ տեսայ, որ բնակիչները տակու վրայ կը շփոթէին : Ամէնքը տունեքէ դուրս կը ծափէին և կը վազէին խոտներամ գէտ ի անշուք հիւրատունի մը դրան առջև ուր երկու փակ կառքեր կային : Ձիերը չ'էին արձակուեր զեռ. յոգնութիւնէս ու տաքէն կը միտէին և կը յայտնէին որ կառքերը նոր հասեր են հոն :

Վայրկեան մը կանգ առի տեղեկանալու համար թէ, սրկէ կողայ այս շփոթը, բայց շատ բան չկրցայ հասկընալ հետաքրքիր ամբօխէ մը որ տկամը չ'էր զներ հարցումներուս և որ միշտ կը զիմէր հիւրատունին կողմը շփոթալի մղումով : Ի վերջէ վիճակիւր մը պաշտօնի (1) հագած և հրացանը ուսին վրայ՝ դրան առջև եկաւ : Նշան ըրի որ ինձ մօտենայ և աղաչեցի որ այս աղմուկին պատճառը ըսէ : Մեծ բան մը չ'է, պատասխան տուաւ անիկա. տասներկուքի չափ սիրամուղ աղջիկներ բերի հոս իմ ընկերներով և սլտի տանիմ դառնոք մինչև Հաւիլը, ուր նաւ սլտի դրոշին Ամերիկայ երթալու համար : Մէջերէն մէկ քանին աղ-

տր են. կ'երեւայ թէ այս է որ բարի գեղացիներուն հետաքրքրութիւնը կը շարժէ :

Այս տեղեկութիւնը լսելէ Լա կը իրնայի ճամբաս շարունակել ԼՅԷ պառաւ կիսի մը ձայները զիս չբռնէին : Ստիկա հիւրատունէն կ'էլնէր ձեռքերը իրարու կցելով և սլտալով. այս ինչ բարբարոսութիւն է. ինչ սոսկալի և գծալի բան է այս : Որո՞ւ համար աղաչէս կը սլտաւ, հարցնցի տեսր : Ա՛խ, սլտոն, ներս մաէք մէյ մը, պատասխան տուաւ անիկա, և նայեցէք ԼՅԷ այս տեսարանը մարդու սիրաւ չյօշէր : Հետաքրքրութիւն չկաւ վրաս, ձիէն իջայ և սպասատրին տուի որ բռնէ դայն : Ներս մտայ նեղութեամբ բողմութիւնը հրելով, և անդարեւ տեսայ որ զծաշարժ երեւոյթ մը կար հոն :

Այն տասներկու աղջիկներու մէջ, որք մարմնոյ կէսէն շղթայով կապուած էին վեց առ վեց, մէկը կար այնպիսի նայուածով և կերպարանքով որք իր վիճակին չ'էին յարմարեր, և որ ուրիշ սլտաղայի մէջ առջի կարգի աղջիկս օրիորդ սլտի երեւար ինձ : Իր արտաւորութիւնը, իր ճերմկեղէնի և համգուտին ազտը այնքան քիչ ազնկութիւն կուտային իրեն որ յարգանք և զուծողացի իր տեսքէն : Որչափ որ շղթան կը ներէր, անիկա կը շտտար երեսը դարձնել և համդիսակամներու նայուածքէն պահել զինքը : Այս ջանքը, որով ծածկուիլ կ'ուզէր, այնքան բնական էր որ համեստութեան զգայութիւն մը կրնար սեպուիլ,

Որովհետեւ այս ծշուաւ խոմբը տանող վեց զինակիրները նոյն սենեակին մէջ էին, զլսատրին մէկզի կանչեցի և քանի մը մանր ծանօթութիւն խնդրեցի այս գեղանի աղջիկին վրայօք : Ըսածները անորոշ խօսքեր էին և փափագս կրկին ի գերեւ Լա : Ոստիկանին հրամանով, ըսաւ անիկա, հիւանդատունէն հանեցինք զինքը ուր իր բարի վարքին համար մտած չ'երկիր ինձ : Ճամբուն վրայ շատ անգամ հարցուիտրձեր ըրի բայց անիկա կը յամառի և պատասխան տալ չ'ուզէր բնաւ : Թէպէտ և հրաման չ'էմ տուած միւսներէն աւելի խնայել զինքը, սակայն իր վրայ աւելի մեղմ աչքով կը նայիմ վասն զի ինձ այնպէս կը ծուր որ իր ընկերուհիներէն աւելի կ'արժէ : Ահա ձեզի Լիւիտատար մը, աւելցուց զինակիրը, որ իզմէ աւելի տեղեկութիւն կրնայ տալ

(1) bandoulière.

անոր զժբաղդութեան վրայ : Բարիդէն մինչև հոս ետե՛ն էկաւ վայրկեան մը չգաղղելով ողբալէ : Պէտք է որ իր եղբայրը կամ սիրականը ըլլայ :

Այս խօսքերը լսելով՝ դարձայ սենեակին դէպ ի այն խորշը ուր երիտասարդը նստեր էր : Խորին մտածումներու մէջ ընկղմուած կ'երեւարանիկաւ վիշտի այնպիսի պատկեր մը կը յայտնէր որ երբէք տեսած չ'եմ կեանքիս մէջ : Իր հագուստը պարզ էր, բայց մէկ նայուած մը կը բաւէ նշանակելու համար աղքատական և բարեկիրթ մարդը : Մօտեցայ իրեն : Ոտքի ելաւ իս տեսնելով, և իր աչերու մէջ, դէմքին շարժումներու վրայ նշմարեցի այնպիսի քնքուշ և աղնիւ հոյ մը որ բնականօրէն անոր աղեկութիւն ընելու փափագ մը տուաւ սրտիս : Անհանգիստ մ'ըլլաք, ըսի, անոր քովը նստելով : Հետաքրքրութիւն մը կղզաւմ այս գեղանի օրիորդը ճանչնալու որ իր տխուր վիճակին համար ստեղծուած չ'երեւիր ինձ. կը հաճիք արդեօք փափագս լեցնել :

Մարդավարութեամբ պատասխան տուաւ, թէ չ'էր կրնար ինձ յայտնել այն օրիորդին ո՛վ ըլլալը առանց զինքը յայտնելու, և թէ՛ ծանր պատճառներէ ստիպւած՝ կ'ուզէր որ իր ո՛վ ըլլալը չ'հռչակուի : Այսու ամենայնիւ կրնամ ըսել ձեզի ինչ որ սոսնձօրէնները գիտեն, վրայ բերաւ անիկա զինուորները ցուցնելով, ևս այս օրիորդը այնպիսի բռն իրիւրով կը սիրեմ որ աշխարհիս ամենէն ողորմելի մարդն եմ հիմա : Բարիդի, մէջ ամէն բան ի գործ դրի որ իր աղատութիւնը ընդունիմ : Աղէքս, ճարպիկութիւն, զօրութիւն անօգուտ եղան ինձ, անոր համար կամք ըրի նստելն երթալ և իր շաւիղը չ'օղուլ նսն երբ երկրիս մէկ ծայրէն միւսը քշուելու ըլլայ : Անոր հետ նաւը պիտի մտնեմ : Ամերիկա պիտի երթամ անոր հետ :

Բայց, որ յետին անգթութիւն է, այս վատ և ստանալ զինուորները չ'եններ որ մօտիմ և խօսք մը ըսեմ անոր : Միտքս զրկել էի յայտնապէս անոնց վրայ յարձակիլ Բարիդէն քանի մը մղոն հեռու : Այս զխտաւորութիւնով չորս մարդ դաւակից ըրեր էի որք մեծ գումարի մը համար խօսք տուել էին ձեռնառու ըլլալ ինձ : Մատնիչները կուտելու ատեն իս մինակ թողին և ստակս առնելով վախտն : Այն ատեն տեսնելով որ կարելի չ'է յաջողիլ, դէնքս վտր դրի : Առաջարկեցի զինուորներու սր զոնէ հաճին զիս թողուլ իրենց հետեւելու և խստացայ վարձատրել զանոնք : Շահու տէնչը առաջարկութիւնս ընդունելի ըրաւ : Ամէն անգամ որ սիրունի օրիորդիս հետ խօսելու աղատութիւն կուտային ստակ կ'ուզէին փոխարէն : Շատ չ'անցաւ քսակիս մէջ բան չ'մնաց, և հիմա որ բարա չ'ունիմ բարբարոսութեամբ հետեւ կը մղեն զիս երբ բալ մը կ'ստնում դէպ ի անոր կողմը : Դեռ քանի մը վայրկեան առաջ անոնց սպառնալիքը արհամարհելով երբ ուղեցի մօտիլ, յանդգնեցան իրենց հրացանին ծայրը վրաս ուղղել : Կը բռնաղատուիմ հիմա

իրենց ազահութիւնը յագեցնելու և հետի ճամբաս շարունակելու համար, վաճառել այս խեղճ ձին որու վրայ նստայ մինչև հոս գալու ատեն :

Թէպէտ և երիտասարդը հանդարտութեամբ կ'ըսէր այս ամէնը՝ սակայն վերջին բառերը բերնէն հանելու ժամանակ սկսաւ քանի մը արտասուք թափել : Այս դէպքը կարգէ դուրս և զթալիր երեւցաւ ինձ : Չ'եմ ստիպել զձեզ, ըսի անոր, ձեր գործերու զաղտնիքը յայտնել, բայց եթէ բանի մը մէջ օգտակար կրնամ ըլլալ, կը նուիրուիմ այս ծառայութիւնը ընել ձեզ : Ախսն, պատասխան տուաւ անիկա, յուսալու նշոյլ մը չ'եմ տեսներ : Պէտք է որ ճակատագրիս բոլոր խստութեան հնազանդիմ անմուռնչ : Ամերիկա կ'երթամ : Հոն գոնէ աղատ օրեր կ'անցնեմ սիրոյ հետ : Բարեկամներէս մէկին զրեցի որ ինձ քիչ մը ստակ զրկէ Հալլը : Գժուարութիւնը մինչև հոն հասնիլ է. և տրտմութեամբ օրիորդին վրայ նայելով աւելցուց, զժուարութիւն զոր կ'ղզամ նաև թէ ինչպէս այս զժբաղդ արարածին ճամբու անհանգստութիւնը մեղմելու հնարք մը գտնեմ : Այս կողմէ անհոգ եղիք, ըսի անոր, ահա ձեզի քանի մը ոսկի դոր կ'աղաչեմ ընդունիլ սիրով : Վ'ղչարիմ որ ուրիշ կերպով չ'եմ կրնար ձեզ ծառայութիւն ընել :

Չորս ոսկի տուի անոր զինուորներէն գաղտնի, վտանգի ստոյգ էի որ եթէ զխնային թէ ստակ ունի քովը, իրենց թողտուութիւնը աւելի սուղ պիտի վաճառէին : Միտքս եկաւ նաև որ զին մը կ'աղեմ անոնց որպէս զի երիտասարդ սիրականը միշտ աղատութիւն ունենայ օրիորդին հետ խօսելու մինչև Հալլը քաղաքը : Նշանով զինակիրներու զխտաւոր քովս կ'անչեցի և զխտաւորութիւնս ըսի անոր : Այս լսելով ուսմէն կարմրեցաւ. թէպէտև շատ լրբութիւն ունենար : Մի կարծէք, պարսմ, ըսաւ ինձ շփոթ դէմքով մը, թէ կ'արգիլենք զինքը որ օրիորդին հետ խօսի. ո՛չ, բայց անիկա բոլոր մը պակսիլ չ'ուզէր անոր քովէն. այս նկատութիւն կուտայ մեզի, ուստի իրաւունք է որ այս նկատութեան փոխարէն բան մը շնորհէ : Լաւ, ըսի անոր, յայտնեցէք ուրեմն, թէ ինչ փոխարէն կ'ուզէք այս նկատութիւնը չ'զգալու համար : Նրկու ոսկի խնդրելու յանդգնեցաւ : Առ ժամայն տուի զանոնք իրեն. Բայց շփոթութիւն ըրէք, ըսի կրկին, նկատութիւն մը չ'անէք ստակը առնելէն ետե՛ վտանգի երիտասարդին պիտի յայտնեմ թէ ո՛վ եմ և ո՛ր կը բնակիմ. եղածը ինձ զրեւու աղատութիւն ունի և ես կրնամ զձեզ պատմել տալ : Ընդ ամէնը վից ոսկիէն ելայ այս պարագայի մէջ :

Անձանօթ երիտասարդը այնքան աղնիւ շնորհքով և սրտագին երախտագիտութիւնով շնորհակալ եղաւ որ վերջապէս համոզուեցայ թէ՛ անպիտան մէկ մը չ'էր ծներ և թէ՛ արժանի էր ստատածեանութեանս : Գուրս երնելէ առաջ քանի մը խօսք ըսի սիրունի օրիորդին : Ասիկա այնչափ անոյշ և զմայելի համեստութեամբ պա-

տասխան տուտ, որ անկարելի էր առ ինձ չխորհիլ, մեկ-
նելու ատեն, և բիրտ մտածութիւն չ'ընել կրնարու անիմա-
նայի բարքին վրայ :

Վերադառնալով մենական կեանքին մէջ՝ այս
դէպքին հետեանք չիմացայ : Գրեթէ երկու տարի ան-
ցան և բոլորովին միտքէս հանեցին զայն մինչև որ
բաղդիւ պարագայ մը եկաւ և մանրամասնօրէն տալէն
բան յայտնեց :

Լօնտօնէն ի Քալէ կուգայի... մարգիդ (marquis) աշա-
կերտիս հետ : Նո՛ւ էլ լաւ մը կը յիշեմ Նիօն ա'Սր ըստած
օժեւանը իշանք և քանի մը առիթներու համար ստի-
պուեցանք բոլոր օրը և հետագայ զիշերը հոն անցնել :
Վէսթընէն ետե գտնեցերու մէջ պտըտելու ատեն նշմա-
րեցի նոյն երիտասարդը որուն հանդիպելի էի Բասիլի
մէջ : Վրայի հանգուտը ընտիր չ'էր և առջի անգամ
տեսածէս աւելի դեղին երես մ'ունէր : Հին պարկ մը
կար թելին վրայ որովհետեւ դէս նոր հասեր էր քաղաքը :
Սակայն դէմքով այնքան աղբոր էր անիկա որ տեսնողը
չ'էր կրնար մոռնալ իր անձը : Ուստի նայելուս պէս
ճանչցայ և ըսի մարգիդին. պէտք է որ այս տղայ մար-
դուն մերձեանք և խօսիմք հետը :

Երբ ինքնալ զիս ճանչցաւ անասելի ուրախութիւն մը
զգաց : Ա'հ, պարոն, ըսաւ բարձրաձայն ձեռքս պազ-
նելով, սիրտի կրնամ ուրեմն գտնել մէկ հեղամեկ երախ-
տագիտութիւնս ձեզ յայտնել : Հարցուցի անոր, թէ
սերկէ կուգար : Պատասխան տուաւ որ ծովով կուգար
Հալիքէն ուր քիչ մ'առաջ Ամերիգայէն հասեր էր : Ինձ
կ'երեւի թէ ստիկ կողմէ նեղութեան մէջ էր, ըսի անոր,
ես խիօն ա'Սր իշեր եմ, դուք ալ հոն գացէք և բոսկէ
մը ետեւէդ կը հասնիմ :

Արդարեւ շուտով օժեւան զարձայ, վասն զի մեծ
անհամբերութիւն կ'զգայի գիտնալու իր թշուառութեան
ամէն մասերը և Ամերիգայի ճամբորդութեան ամէն
պարագաները : Զինքը սփոփեցի փաղարուջ կերպե-
րով և հրաման ըրի որ բանի մը կարօտ չ'ընդուն : Զ'ըս-
տասեց որ զինքը բռնադատեմ իր կեանքին պատմու-
թիւնը ընելու համար : Պարոն, ըսաւ ինձ, այնքան
աղիւտաբար կը վարուիք հետս որ ձեզմէ գաղտնիք մը
պահել իրբն ստորին ապերախտութիւն սիրտի թուի
սիրտին : Ա'ուղեմ ձեզ պատմել ոչ միայն աղէտներս
և վիշտերս այլ և բարբիտ անկարգութիւնները և տկա-
րութիւնները : Հաւատարի եմ որ դատաւարտելէ ետե
չ'սկսի կրնաք ձեր գծութիւնը խնայել ինձ :

Պարտ կընեսկեմ հոս աղիւ առնել ընթերցողին որ իր
պատմութիւնը գրեցի լսելիս շուտ մը ետքը, ուստի
աղանով կրնայ ըլլալ իր ստուգութեան և հատարմու-
թեան վրայ. հաւատարմութիւն՝ մինչև խորհելու և
զգալու կերպերուն համար, սրովք երիտասարդ սիրա-
կանը անոյշ անոյշ կը պատմէր իր սրտի և զխոն
եկամները : Ահա ուրեմն այս պատմութիւնը ուր, մինչև

վերջը, տող մը չ'սկսի խառնեմ որ իրմէ չ'ըլլայ :

Տասնեօթ տարեկան էի և փիլիսոփայութեան ուսումն-
ներս կը կատարէի Ամիէնի մէջ ուր իս դրկեր էին
ձնողքսորք Բ... Իշաւագոյն գերդաստաններու կարգէն
Այնչափ զգօն և կանոնաւոր կեանք մը կը վարէի որ
վարժապետներս իբրեւ օրինակ կը ցուցնէին զիս
զարատունին մէջ : Այս գովեստին արժանի ըլլալու հա-
մար կարգէ դուրս ջանք մը չ'էի ընէր, բայց ի բնէ
անոյշ և հանդարտ խոշոյ ծնէր եմ. յօժարութեամբ
կը սրարապէի ուսումներու և առաքինութիւններ կը սե-
պուէին այն նշանները որք մոլորութիւններու համար ունեւ
բնական ատելութիւնս կը յայտնէին : Ընտանիքիս
անունը, ուսումներու մէջ յաջողութիւնս, արտաքին
քանի մը շնորհքներս քաղքին ամէն պատուաւոր մարդե-
րու ճանչցուցին զիս և յարգել տուին :

Այնպիսի ընդհանուր հասնութեամբ քննութիւն տուի,
որ Պ. Նախկուպոսը, հոն ներկայ գտնուելով, ինձ առա-
ջարկեց որ եկեղեցական ըլլիմ. այս կերպով աւելի մեծ
պատուոյ հասնելու աղանովութիւնս ունէի, կ'ըսէր
անիկա, քան թէ Մալծայի ասպետութեան ուխտին մէջ
ուր ձնողքս կ'ուզէին որ մտնեմ : Արդէն ասոնք Մալ-
ծայի խաչը կրել կուտային ինձ տապէս տէ Արիէօ մա-
կանութեով : Երբ հանգստի օրերը եկան, հօրս քով դառ-
նալու կը պատրաստուէի, վասն զի անիկա խօսք
տուեր էր ինձ հեմարան զրկել քիչ ատենէն :

Ամիէնէ հեռանալու ժամանակ ուրիշ բանի վրայ չ'էի
զղջար, բայց միայն բարեկամէ մը բաժնուելուս, որու
հետ միշտ կամողին սիրով կապուեր էի : Ինձմէ քանի
մը տարեկան մեծ էր : Մէկ տեղ կրթութիւն առած էինք,
բայց իր ընտանիքը հարուստ չ'ըլլալով կը հարկադ-
րուէր կրօնաւորի վիճակը ընտրել և տակաւին Ամիէն
մնալ իր աստիճանին վերաբերուած ուսումները սովորե-
լու համար : Բիրաւոր աղին յատկութիւններ ունէր
անիկա : Լաւագոյնէն սիրտի ճանչնաք զինքը երբ դա-
նոնք պատմելու տեղը հասնիմք, մանաւանդ իր յօժա-
րութիւնը և վեհանձնութիւնը ի բարեկամութեան որք
հին ատենի ամենէն երեւելի օրինակները կը գերադան-
ցեն : Նո՛ւ էր խրատներուն հետեւէի այն ժամանակ.
միշտ զգաստ և երջանիկ սիրտի ըլլիլ. կամ գոնէ եթէ
օգուտ քաղէի իր յանդիմանութիւններէն, այն վիճին մէջ,
ուր կիրքերը զլուրեցին զիս՝ սիրտի կրնայի հարստու-
թիւնէս և պատիւէս մաս մը աղատել : Եր հոգերը ան-
բերրի մնացին և տրտմութիւնէ ուրիշ բան չ'ընեցաւ
տնկէ երբ տեսաւ որ ի դուր կ'աշխատի և խստիւ կը
վարձատրուի ապերախտէ մը որ կը սրամտէր և զլիսի
ցաւ կը սեպէր զանոնք :

ԱՊԵՐԵՐԵՆԸ.

(Պիտի շարունակուի.)

Ե Ր Կ ՈՒ Տ ՈՄ Ս Ա Կ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷՎ ԱՐԱՐԳՈՎ

ԱՆՁԵՐ. { ԱՐԼԲԵՆ, սիրական Արժանքին.
ԱՐԺԱՆԹԻՆ.
ՍԲԱՐԵՆ, հակառակորդ Արլըբենի.

Տեսարան է ի Բարիզ, հրապարակի մը վրայ ուր կը տեսնուի բնակարան Արժանքինի.

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ.

ԱՐԼԲԵՆ, միևնակ, տունակ ի ձեռին.

Ահա այս առաջին անգամն է որ ուրախ եմ կարգալ զիտնալուս համար. Խնչ՝ Երանութիւն. Արժանքին զիտ կը սիրէ: Ալ չ'եմ երկրայիր, վասն զի ըստ, զրեց դայն և Արժանքին չկրնար ստել. այնպիսի սիրուն բերան և սպիտակ ձեռք մը խաբելու համար չ'էն տունեալ իրեն: Մէջմ'ալ կարգանք իր տոմսակը. (կը կարգայ) « Հանգստաւ եղիր, սիրական իմ, քու հակառակորդը անհանգստութիւն չպիտի տայ քեզ: Ես քեզ կը սիրեմ: » Կը սիրեմ դեռ. չ'եմ համարձակիր պագնել այս բառը վախճալով որ չ'աւրեմ դայն: (Կը շարունակէ.) « Սիրտս քո է միշտ, և երբ ուզես հարսնութեան մաստ տալու պատրաստ եմ: » Երբ ուզեմ. այլ ուզելէ ուրիշ բան չ'եմ ընէր ես զինք հանչնալէս ի վեր:

Ո՛ սիրաբոյր համակ, բարի համակ. (կը պագնէ): Ոգի մո, սէր իմ, ալ վախ չկայ: Սն քու Արաբէնը շատ կասկած կուտար ինձի երեսէն սիրահար ձեռնալով Արժանքինի, և շատ անգամ այս սուտ սիրահարները աւելի ընդունելի են ճշմարիտ սիրով վառեալ սըրտերէն: Բազդիւ՝ Արժանքին սիրոյ այսպիսի դառնը զիտէ: Երեւեմ երթամ իրմէ շնորհակալ ըլլամ և հարսանիքի օր մը որոշեմ: Ո՛հ ինչ դուրսը օր պիտի ըլլայ այն օրը. (կ'երեւելէ): Սակայն բան մը կայ որ ինձի տրտմութիւն կը պատճառէ. Արժանքին հարուստ է և ես չբարւոր. կ'ուզէի ես ալ հարուստ ըլլալ, կամ դանիկա իմ վիճակի մէջ տեսնել: Երբ այսպէս մէկ կողմ հարստութիւն կայ և միւս կողմ սէրէ ուրիշ բան չկայ: Ես այնպէս կ'երեւակայեմ, գոցէ յանիւրաւի, թէ՛ սէրը կը կաղայ կամ այնպէս չջարժիր երբ երկու կողմէն ալ հաւասարութիւն կայ և սէր սիրոյ կը հանդիպի: Խնչ ընեմ անօգուտ է, չ'եմ կրնար հարստանալ. ամէն ամիս իմ շահով վիճակի թիւեր կ'առնում, այլ միշտ այս թիւերը պարկին յատակը կ'մնան: Երեք թիւ առի այս վիճակէն ալ. (տունակ մը կը հանէ.) ահաւորիկ են 7. 19. 48: Վեց փրանքէ էլայ այս երեք թիւերու համար. Եթէ միտակ էրնէն մէկէ ի մէկ հարստութեան տէր եմ

և կը նուիրեմ դայն Արժանքինի. Եթէ չ'երեւն նոր վիճակի մը ամէն թիւերը առնելու միտք ունիմ. հայինք մէջ մը, ի վերջէ լաւ թիւ մը պիտի գտնուի արդեօք: Հիմա այս թիւ մէկ զի մնայ և երեւեմ երթամ Արժանքինը տեսնեմ... այլ ահա Արաբէն որ կուգայ, համակս պահէնք և սպասենք որ կորի երթայ: (Արլըբեն կրկն տունակները մի և նոյն գրպանի մէջ կը պահէ):

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱՐԼԲԵՆ, ՍԲԱՐԵՆ.

ՍԲԱՐ. Բարի լոյս, Արլըբէն:

ԱՐԼԲ. Ծառայ եմ, պարոն:

ՍԲԱՐ. Պարոն մի. դու ինձի հետ միշտ այնպէս կը խօսիս իբր թէ սրդողեր ես. հայէ՛ ես քեզ կը հմանիմ, և...

ԱՐԼԲ. Ո՛հ, լաւ գիտեմ որ իրարու չ'եմ հմանիր:

ՍԲԱՐ. Այդ ինչ խօսք է, բարեկամ, պէտք է զիրար տեսել որովհետեւ երկուքս ալ մէկ օրիորդ կը սիրեմք: Կիմ մի չ'արժէր որ, իրեն համար, երկու առաքինի մարդ արուին:

ԱՐԼԲ. Այլ կը մտնաս ըսելու որ երկու առաքինի մարդ իրարու հետ տարուելու համար պէտք է որ երկուքըն ալ առաքինի ըլլան, և...

ՍԲԱՐ. Ես, պարոն Արլըբէն:

ԱՐԼԲ. Ինչ պահեմ, պարոն Արլըբէնը քեզ չսիրէր: Բոլոր երջանկութիւնս Արժանքինէ կ'ախեալ է. դանիկա սիրելէն ուրիշ բան չ'եմ գիտեր չ'եմ ուզեր և չ'եմ կրնար, և դու, որ դանիկա կիմ ամուսն կը փափաքիս անոր հարստութիւնը ձեռք ձգելու համար, այնպէս կը ձեռացնես իբր թէ ճշմարիտ սիրահար ըլլաս: Կարելի թէ իդմէ աւելի հաճելի ըլլաս անոր, վասն զի մարդ մը որ սիրահար չէ միտքը չկորուսնէր և անով ամէն բան կը շտկուէ. ընդ հակառակը իմ վրայ ոչ խելք և ոչ միտք մնացեր է: Ո՛հ ինչ մտաւորանքութիւն. սուր էր թէ ասկէ հետո՞ շատ հեռու ըլլայիր:

ՍԲԱՐ. Սակայն, սիրելի Արլըբէն. պէտք է որ սովորիս հակառակորդներ ունեւ, զիտեմ որ գեղանի երի-

տատարող մ'էս, բայց այնպիսի արի սիրահարներ կան որ անկէ չ'են յուսահատիր բեղիկէ մամբառելու Եթէ Ար-
ժանթին արժանի կերպով զբեղ չյարգէր, ինչ ընենք:
համբերելու է փիլիսոփայօրէն, բարեկամ:

ԱՐԼԸՔ. Հանդարտ եղիր. համբերել կը սովորեմ:
Բարի զիշեր:

ՍՔԱՐ. Ո՛ւր բարի այգիդ էս:

ԱՐԼԸՔ. Երթամ նայիմ վիճակ պիտի հանեն այսօր:

ՍՔԱՐ. Վիճակը էլաւ, արդէն կէս ժամ կայ. ցանկը
գրասնիս մէջ է. ահա շահող թիւերը, 7, 20, 48, 12, 19:

ԱՐԼԸՔ. Ի՞նչ կ'ըսես, կայնէ նայիմ. (գրասնէն վի-
ճակի տունակ մը կը հանէ): Մի՞թէ 7 թիւը ըստ է:

ՍՔԱՐ. Այո՛. 19 թիւն ալ:

ԱՐԼԸՔ. 19 թիւն ալ:

ՍՔԱՐ. Այո՛.

ԱՐԼԸՔ. Հոսով 48 թիւը:

ՍՔԱՐ. Այո՛ կ'ըսեմ:

ԱՐԼԸՔ. Ա՛հ չկատակես:

ՍՔԱՐ. Ոչ. եթէ չ'ես հաւատար, դու նայէ քննէ:

ԱՐԼԸՔ. Չ'ըսես որ հարստութիւնս գտայ. երեք թիւե-
րու մէկէն էլան (terne), շահեցայ: Ո՛հ այս սրբան ըս-
տակ ձեռք պիտի բերեմ. այստե՛տե տիրոջ տոմս-
նութիւն մը պիտի կրնամ ընել:

ՍՔԱՐ. Իրան ըսիր. (Արլըքէն տունակին կը նայ): Իրա-
նունք ունի եղեր շահեր է. նայէ մէյ մը սըւրբ երանութեան:

ԱՐԼԸՔ. Արդէն երկար ժամանակ է որ այսպիսի բազ-
ղի մը կ'սպասէի. հաւատով եմ որ Երեսուն անգամէն
առելի բովէն անցայ, ի վերջէ հանդիպեցայ անոր:

(Եր տունակը միևնոյն գրասնին մէջ կը դնէ):

ՍՔԱՐ. (մէկտափ): Եթէ մէյ մը սո՛ւ տոմսակը ձեռք
բերէի:

ԱՐԼԸՔ. Մնն բարեաւ, երթամ ստակը ուղեմ. վասն
դի միտք տնիմ դայն շահու դնել ոչ իմ գլխուս վրայ այլ
աշխարհի ամենէն ազուրիկ ոտքերու ներքե:

ՍՔԱՐ. Վայնէ նայի՛նք. այդ սրբան կ'արտօրաս: Մի-
թէ գիտես միայն թէ սո՛ւ երթալու է ստակը տանելու
համար:

ԱՐԼԸՔ. Չէ.

ՍՔԱՐ. Ուրեմն մտիկ ըրէ՛ որ ըսեմ քեզ վճարողին
բնակարանը. (միևնոյն տեսարանի վերջը Սքարէն կ'աշ-
խատի Սրլըքէն տունակը գողնայ): Գիտե՛ս սո՛ւ է Լիւր-
տանդուր:

ԱՐԼԸՔ. Այո՛:

ՍՔԱՐ. Լաւ. տոմսակները հոն կը վճարուին:

ԱՐԼԸՔ. Լիւրտանդուրին մէջ:

ՍՔԱՐ. Այո՛... այսինքն... ոչ...: Հոն մտնելէ առաջ՝
յոք մէ պիտի տեսնես մեծ դուռ մը ուրկէ կը մտնեն կառ-
քեր... նայէ, ահա առջեւ է Լիւրտանդուր. հոն կայ
մէկ մեծ դուռ... դեղին:

ԱՐԼԸՔ. Դեղին դուռ մը:

ՍՔԱՐ. (շուտով) Այո՛, մէկէն պիտի ճանչնաս դայն:
Կը զարնես, կը բանան, ներս կը մտնես, յանկէ սան-
դուս մը կը տեսնես, կ'եննես վեր, առջի դատիկոնի
վրայ կը գտնես, ճերմակ պղտի դրան մը քով, դան-
գակի մը չուանը, որուն ծայրը եղնի ոտք մը կայ, կը
զարնես և սո՛ւ սպասուորը կուգայ: Խնդրեմ խօսիլ
տեսուչին հետ (կ'ըսես): Աշխատ եղիք ներս մտէք (կը-
սէ անի): Չքեզ կ'առնէ գրատունը կը տանի, տոմսա-
կը կը բանաս, մէկէն արծաթը կը զիգուի և Երեսուն
քսակ հազար Փրանքի առջեւ կը գրուին: Ահա առիկ,
պարոն, առէք. եթէ կամիր աշխատ եղիք քննել հաշ-
ւին ճշգրտութեամբ, մարդ կրնայ սխալիլ, զուր ալ հաշուե-
ցէք. նայեցէք, նայեցէք... (Արլըքէն կը գտնէ և դէպ ի դե-
տին կը նայի, Սքարէն տունակը կը գողնայ): Այսպէս
ահա տոմսակը քու ձեռքէդ կ'առնուն, ստակները կու-
տան և բարի եկար հազար բարի:

ԱՐԼԸՔ. Խրատող շատ պարզ և յայտնի է. դէմ յան-
դիման, դեղին դուռ, ճերմակ դուռ, եղնի ոտք, սպա-
սուոր, սանդուղ, Երեսուն քսակ հազար Փրանքի,
հաշիւ նայիլ, այս չ'է՛ տուած տեղեկութիւններդ, լաւ
մը չ'առնեցայ: Մէկ բոսկէն հոն եմ, շիտակը եթէ դու
չ'ըլլայիր շատ պիտի շփոթուէի, շնորհակալ եմ:

ՍՔԱՐ. Շնորհակալութեան բան չկայ. բարի երեկոյ.
սիրելի, չ'ըլլայ որ դեղին դուռը մոռնաս:

ԱՐԼԸՔ. Ո՛հ, սպասիմ եղիր ես կը գտնամ դայն.
(յոշրա կ'ընէ):

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՍՔԱՐԷՆ, միևնոյն.

Եթէ մեղի պէս մարդիկ հոգ չ'ունենային որ ամէն
բան կարգի մտնէ, այս անբան անասուններէ ուրիշ
մարդ մը երջանիկ չպիտի կրնար ըլլալ: Շատ իրա-
ւունքով կ'ըսուի թէ բազմա անբաններու համար է մի-
այն. հարկը անգամ վիճակի մասն առի, և բաժին մը
ձեռք չ'ընկաւ: Ահա՛ առաջինը, նայինք սր գրատու-
նին է. (տունակը կը բանայ): Ա՛հ տէր աստուած.
խաբուր եմ եղեր, այս սրբան թշուառ եմ ես: Ի՞նչ նաեւ
շահեալ տոմսակներ գողնալով չ'եմ կրնար վիճակի
մը ստակին տէր ըլլալ: Տոմսակ կարծեալ հոմակ մ'է
եղեր. (կը կարգայ): « Հանգարտ եղիր. սիրական իմ,
քու հակառակորդը թող անհանգստութիւն չ'ուայ քեզ:
Ես քեզ կը սիրեմ: Արտաւ քո է միշտ և երբ ուղես հար-
սըզ ըլլալու նրա տրտառ եմ: » Արժանութիւն է ուրեմն
այս տոմսակը. ալ տարակոյս չկայ: Ա՛հ, մահ երբ ու-
ղենէ հարս պիտի կրնայ տանուլ. տեսնենք. ես անոր
նայրան հաստատութիւն չ'եմ տար և որովհետեւ հար-
սիկութիւնս պարտաւ էր և վիճակի տոմսակը ձեռք
չ'երբի, զոնէ ասկէ օգուտ քաղելու է և անոր արժէքը

պէսը չ'է կորուսեալ: (Արժանիքի տար կը գարեւ):
Օրինորդ Արժանիքին...:

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԱՐԺԱՆԹԻՆ, ՍՔԱՐԲԵՆ.

ԱՐԺԱՆ. Ա՛հ, պարոն Արաբէն զո՛ւր էք:

ՍՔԱՐ. Այո՛, օրինորդ, միշտ ես ինքս...

ԱՐԺԱՆ. Անանկ էնէ վայ ձեզ:

ՍՔԱՐ. Միշտ զժրագլ, այլ ոչ երբէք նուազեալ իմ
նուիրական սէրէս:

ԱՐԺԱՆ. Շնորհ ունիմ, բայց և այնպէս զխոնար որ
տուածմէ աւելի չ'եմ սիրեր զձեզ:

ՍՔԱՐ. Լաւ գիտեմ զայդ, օրինորդ. և իմ կսկիծը ալ
տակի կը բորբոքի երբ կը տեսնեմ որ միւս սիրական-
ներու հետ այդչափ անգուծ չ'էք: Սիրական մը կայ
սիրականներու մէջ դոր ձեր սիրտը ընտրեր է և որուն
անոյշ անոյշ նամակներ կը զրէք:

ԱՐԺԱՆ. Ի՞նչ է այդ, ի՞նչ ըսել կուզէք. պարոն Բա-
րաբէն զիտնաբ որ ձեզի գէշ կ'ընէր ձեր հասարակ սո-
վորութիւնէն դուրս ելնելով: Աւելի լաւ է ձեզի համար
տաղտկալի մնալ բան թէ յանգուզն ըլլալ:

ՍՔԱՐ. Կը ներէք, օրինորդ, յանգուծութիւն չկայ հոս,
կ'ուզէի ձեզի խօսք բանալ նամակի մը վրայ որ ձեռքէ
ձեռք կը պլաշտի, և չար լեզուները կը հրատարակեն
թէ դուք էք զրա՞ծ դայն առ Պ. Արլըբէն: Այս նամակը
ձեռքս անցաւ և ձեզ կը բերէի զայն: Այ բերանս չ'եմ
բանար, որովհետեւ եթէ խօսիմ յանգուզն պիտի երեւ-
նամ նորէն ձեզի:

ԱՐԺԱՆ. Նամակս կը բերէք, ա՛հ, սիրելի Արաբէն,
ալ մի լռէք կ'աղաչեմ, ըսէք նայիմ ի՞նչ խօսք կը պլա-
շտի իմ վրայ: Եթէ ճշմարիտ է թէ իս կը սիրէք կըր-
նոր գատել որ...

ՍՔԱՐ. Ճշմարիտ, շատ ճշմարիտ է որ զձեզ կը սի-
րեմ և յոյս ունիմ որ հիմա պիտի համոզուիք թէ յանի-
րակ կը մերժէիք զիս: Կը ճանչնաք, այնպէս չ'ը
Վիօլէթ օրինորդ որ ասկէ քիչ հեռու կը բնակի: Պա-
րոն Արլըբէն անոր սիրահար է և իր սիրոյ տկներն
փառս մը տալու համար հաներ տոմսակ մը տուեր է
անոր ըսելով որ դուք էք զրա՞ծ դայն առ Արլըբէն:
Ահաւասիկ:

ԱՐԺԱՆ. Ո՛հ սուրբ աստուածածին:

ՍՔԱՐ. Օրինորդ Վիօլէթն' որ զձեզ չսիրէր, վասն զի
ձեզի չափ զեղանի չ'է, այս տոմսակը կ'առնու չ'առ-
նոր իր ամէն բարեկամներու կը յայտնէ: Այս առա-
ւօտ Բալէ-Բուպալի հրատարակեն անցնելու ատեն քան
բա՛ն ձայներ ախանջիս հասաւ, հուտքում մը տեսայ.
Պ. Մէլըթէն, Պ. Թրիվըլէն, Պ. Բապարիէլ հոն կայ-
ներ ձեր ատմակը իրարու կը հաղորդէին. մէկը վերա-

զրով մը կը հեգնէր. միւսը կ'ըսէր բաւ կ'արտասանէր:
Ի՛նչ պահեմ այն ատեն բարեկամիմս չկրցայ զսպել,
յուսամ որ ներում կուտաք, և սկսայ երեքին ալ դէմ
դնել, այլ մամաւանդ Թրիվըլէնի սրուն ձեռք էր տոմ-
սակը: Սպառնացի, վախցաւ և տոմսակը ինծի յանձ-
նեց: Ես առի դայն և ձեզ կը բերէի, և դուք իբրեւ
վարձ ըրածիս զիտէք ի՞նչ ընդունելութիւն ըրիք ինծի:

ԱՐԺԱՆ. Զ'եմ համարձակիր ոչ ներում խնդրել և ոչ
շնորհակալ ըլլալ ձեզմէ. ամօթով եմ ձեր անջեւ. ուրի-
շին ըրի ինչ որ պարտաւոր էի ձեզի ընել:

ՍՔԱՐ. Օրինորդ, երանելի կըլլայի բոլոր կեանքիս մէջ
եթէ ձեր սէրը ինքնին զար իմ վրայ և ոչ ձեր սխառոյ
վրէժխնդիր ըլլալուս համար զիս սիրէիք. այլ ինծի
չափ սիրահար մը այսպիսի տարբերութիւնէ չվիրաւո-
րուիր, նաև հիմա ամէն մարդերէ երջանիկ պիտի ըլ-
լամ եթէ Արլըբէնի անհաւատարմութիւնը...

ԱՐԺԱՆ. Ո՛հ սըւոր խօսքը մ'ընէր, անունը միայն լսեմ
նէ կը կատարիմ: Եթէ զիտնայիք միայն թէ անոր խաբէ-
ւածիւնը մինչև ո՛ր հասաւ... Ոչ, ոչ բնաւ չ'էք կրնար
երեսակոյցել զայն... Եւ ես կը կարծէի որ զանի լաւ մը
ճանաչէր եմ:

Ներում չպիտի տամ երբէք անոր և միշտ պիտի յի-
շեմ ըրածը որպէս զի օրէ օր ատելութիւնս աւելնայ:

ՍՔԱՐ. Լաւութիւն. ձայնը կ'առնում:

ԱՐԼԵՐ. Զ'եմ ուզեր տեսնել երեսը:

ՍՔԱՐ. Ընդ հակառակը նստեցէք որ երեսը վար տու-
նէք և անոր արժանի պատիժը տաք:

ԱՐԺԱՆ. Երբէք այդ համարձակութիւնը չպիտի կըր-
նամ ունենալ:

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԱՐԺԱՆԹԻՆ, ԱՐԼԵՐԲԵՆ, ՍՔԱՐԲԵՆ.

ԱՐԼԵՐ. (Արժանիքի չտեսնելով): Իրոյզ տանի գրեզ
և բու զեղին դուռը: Ամէն զեղին դուռերը զարկի, աջ
կողմի դուռերը զարկի, տեսուչ մը չգտայ: Հետս եկու
յոյց տուր նայիմ... (Կը ճշմարէ զԱրժանիքի): Ա՛հ
դուք հոս էք եղեր. ինչ երանելի հանդիպում: Արդէն
էկեր եմ զձեզ բնառելու, ես դառնալու ատեն նաև ըզ-
ձեզ կը բնառէի, ամէն տեղ զձեզ կը բնառեմ միշտ:
Գիտէք ինչիւր ունիմ ձեզի ըսելու, այլ երբ երեսնիդ կը-
տեսնեմ ամէն բան միտքէս կ'ելնէ. հեռանում նէ նորէն
կը յիշեմ շուտով, այնպէս շուտով որ հողիս բերանս
կուգայ: Կարծեմ թէ ձեր անջեւ իմ յիշողութիւնս ամ-
փոփ պահելու համար ուրիշ ճար չկայ բայց եթէ փակ
աչքով ձեզ նայիլ. վասն զի անհնարին է ձեր երեսը
տեսնել և ուրիշ բանի վրայ խորհիլ: (Արժանիքի չը-
տեսնելու): Արլըբէն իրար քառքիւն ետեւ կը դառնայ
յեպ ի Սքաբէն:) Կորի, զնո՛ւ. հոս ի՞նչ բան ունիս որ
նեղութիւն կուտաս ինծի:

ՍՐԺԱՆ. Ո՛չ, կրնայ մնալ, իսկ չնշեղէր անիկա :
ՍՔԱՐ. Օրիորդին այն կերպով ձեր վրայ իր միտքը
յայտնելէ ետեւ, իր սիրոյ համար այնքան զրած ուղա-
հովածութենէն տալէ ետք՝ ինձ կ'երեւի որ բան մը չպի-
տի նեղէ դրեղ :

ՍՐԼԸԲ. (մեղմ առ Սրժանին .) Ուրեմն ամէն բան
անոր պատմէր էր... չ'ըսէք ... ամէն բան անոր ըսիք
մի... (Սրժանին կը ծիծաղի) : Երեսէն կը հասկնամ որ
ամէն բանի հաստ է : Պարոն Աքաբէն ալ գաղտնիք
պէտք չ'է. կաղաչեմ մտքերնիս յայտնենք : Օրիորդ
Արժանութիւնը կը սիրէք, ճշմարիտ չ'է :

ՍՔԱՐ. Տարակոյս չ'իայ, կը սիրեմ, ինք ալ լաւ գիտէ :

ՍՐԼԸԲ. Լաւ. բայց ես ալ կը սիրեմ և չ'եմ սիրեր որ
ուրիշ մը սիրէ իդմէ սիրուածը : Հիմա երկուքս ալ
անոր առջեւ եմք. ըսել տանք թէ մեր երկուքէն ո՞րը աւե-
րի հաճելի է իրեն, այն պայմանով որ մերժեալը պի-
տի հրաժարի լոյն և հանդարտ պիտի ծոզու միտք :
Կը հաւանքը պարոն Աքաբէն :

ՍՔԱՐ. Ձեռքդ տուր. ես ալ այն կ'ուզէի պարոն Աք-
աբէն : Ըսածդ մի մոռնար : Օրիորդը պիտի ընտրէ և
ալ որ մերժուի ալ ճիշդ չ'պիտի հանէ :

ՍՐԼԸԲ. Կ'ընդունիմ ի բոլոր սրտէ. (կը ծիծաղի.) մի
այս ինչ անբան է եղեր :

ՍՔԱՐ. Մեր պայմանները լսեցիք, օրիորդ, դուք էք
դատաւոր :

ՍՐԼԸԲ. Այո՛, դուք էք դատաւոր. (մեկնալի) Ո՛հ ան-
բան անասունդ :

ՍՐԺԱՆ. (մեկնալի) Ապերջանիկ պիտի ըլլամ, այլ
կ'ուզեմ վրէժ առնուլ անորմէ :

ՍՔԱՐ. Ըսէք նայինք, օրիորդ :

ՍՐԺԱՆ. Ահա միտքս այս է : Երկար ատեն է որ ես
ընտրել եմ և ընտրուածը զիրով գիտէ դայն : Ձեր եր-
կուքէն ով որ այն գիրը ինձի կը յայտնէ, սիրականս է :

ՍՐԼԸԲ. Ասկէ յայտնի խօսք չ'ըլլար : (Սրժանին ի գլու-
պակի կը բնառէ.) Բնառէ, բնառէ, և թէ բան մը չ'ունիս
բնառէ կը գտնաս ... Ահա այն տոմսակը (վիճակիկ
տոմսակը ցոյց կ'առայ.) ահա տես : Պարոն Աքաբէն մը-
նայր բարեւ, ալ պատիւ չ'պիտի ունենամ դձեղ տեսնելու :

ՍՐԺԱՆ. (աշօքալի) : Տեսնամ... Վիճակի տոմսակ է
եղեր այն :

ՍՐԼԸԲ. Աղէկ ըսիք. չ'իտէք որ չորս կողմն երջան-
կութիւն կը պաշարէ այսօր. շահեցայ... Այլ մարդիկ
զրի միտ տոմսակը. թէպէտ և լաւագոյնը չ'ըլլայ : Մի-
թէ կորուսի դայն :

ՍՔԱՐ. Ո՛վ գիտէ կարելի է ես գառ զայն : Ահա,
օրիորդ, տոմսակ մը որ ձերը կ'երեւայ :

ՍՐԺԱՆ. (կը կարդայ) : « Հանդարտ եղի՛ր սիրականս :

ՍՐԼԸԲ. Ա՛հ, իմ գողցեր եմ :

ՍՐԺԱՆ. Գողցեր եմ մի : Ուրեմն այնպէս պիտի
հաւատաս թէ, մինչև վերջը պիտի կրնաս իսկ խաբել :

Չ'է, մատնիչ, հիմա կը ճանչնամ դրեղ : Գնա Վիճակ-
թին սենեակը, գնահատականը անոր տար, ըսէ որ իս
իրեն կը զոհեմ և յետոյ եկու ներում ըրէ թէ իս կը պաշ-
տեն : Գնա և ետքը եկու հետս խօսիլ, երեսն նայիլ և
կը տեսնես զուրկ ինչ կը բերեմ : Ո՛ մատնիչ անօրէն,
իս խաբէցիր, բայց այսուհետեւ չ'պիտի կրնաս սիրով
պատրուակիլ և կամքդ առաջ տանելու աշխատիլ :

Վրանաս որ վէժանդրութիւնս այսքանով չ'պիտի բա-
ւականայ : Եւ դուք Աքաբէն առէք պոսեցէք այս տոմ-
սակը : Խօսք տուի որ պիտի ամուսնանամ այն մարդու
հետ որ այն տոմսակը ունի, վստահ եղի՛ր խօսքս. ես
չ'եմ սոսնոր : (դուրս կ'երթ) :

ՅԼՕՐԻՍՆ :

(Վերջը հետեւեալ բիւիւն.)

ՄԱՆՐ ԼՈՒՐՆԵՐ

— Բըվիւս տը Լ'եկարրիւքիսե Բիւպիլը անուն հանդէսը
գտնելով կը յիշէ Պօլիսի մէջ հաստատուած ուսումնա-
կան ընկերութիւն մը որ, եթէ իրօք կատարէ իր նկա-
րագիրը, մեծծառայութիւն կրնայ ընելագլին : Յառաջմէ
կրնանք մեր համակրութիւնը խոստանալ հոռմէական
հայ երիտասարդներու, վստահ զի ազատութեան և
Թոյլտուութեան զրօշը մի և նոյն գոյնը ունի աշխարհիս
չորս կողմը և այսօր չ'է որ մենք այս զրօշակին զինուոր
զրուած ենք :

Օտարական հանդէսը այս ընկերութեան ազգի ազգի
օգուած հաշուելէ ետեւ կը յաւելու. « Գովեստի արժանի
պարագայ մ'ալ այն է որ ամէն կրօնական խառնութիւն
պիտի դուրս ձգուի : Արդէն հոռմէական ինչպէս նաեւ
լուսաւորչական Հայք սիրով այս ընկերութիւնը հիմնե-
լու կ'աշխատին : »

Արեւմտեան ընկերացիները լաւ գիտեն որ առջի
Թիւքն մինչև հիմա մեր բռնած ճամբան ալ շատ չ'առա-
բերի անկէ կրօնական մտախմբէ : Եթէ քիչ մը սնու-
վառութիւն ունենայինք կարելի է թէ մեր կարծիքներու
արձագանգը սեպէինք այս գովելի ետեւը : Այս վառքը
չ'ենք ուզեր և կ'աղաչենք ամէն ուսումնասէրները որ
ձեռնառու ըլլան յիշեալ ընկերութեան : Ժամանակը եկու
որ մեր մէջէն վերնան կրօնը անբերբի կտիւր, դոք
մայի ետեւը չ'գաղթի յաղեղէն, և այս կտիւն ծագած
ազգաւոր կատակները : Ժամանակը եկու որ երկու
կողմի վարդապետներն ալ հանդարտ Թոյլտու գովեց
այնպիսի խնդիրներու մէջ որ կրօնը բան չ'ունի, և
ճշմարիտ կրօնասէրը, եկեղեցիէն դուրս, աշխատի
այս կրօնքին պատիւ ընել իր Թոյլտու և հայրենասէր
բարքով : Ժամանակը եկու որ աշխարհական կողմ մը
հաստատուի Հայերուն մէջ և արդեամբ լուծէ այն ամէն
գծուարութիւնները զորս կրօնը չ'կրցու, տասը դարէ

ի վեր, զիրացնել : Որչափ որ այս կողմը չհասնու-
տուի, մեր լուսաւորութիւնը, եթէ լուսաւորութիւն կըր-
նայ անդամիկ Հայերուն անհիմն ձեռնարկութիւնները,
ծիծաղելի կապիկութիւն մը պիտի ըլլայ միշտ և եւրո-
պայի համակրութիւնը ընդունելու ահզ՝ անոր հեգնու-
նութեան ահզի պիտի տայ : « Լնյս, ընյս, տակաւին
լոյս, միշտ լոյս » կ'ըսէր գերմանացի մը և աշխարհա-
կան բերան մը միայն կրնայ այս աղօթքը ընել : Կրօնքի
լոյսը ոչ կը շատնայ և ոչ կը նուաղի, Է և կը մնայ յաւի-
տնակահան : Այս լոյսը Հայերը ունին և արիւնտիւնին
կրցան պահել զայն : միւսը կը պակսի, կամ աւելի հզղիւ
ըսենք, չկայ : Աշխարհականք միայն կրնան զայն
կերտալայէն առնուլ և ազգին մէջ ծաւալել... :

— Հիւսիսային Ամերիկայի մէջ հրատարակուած տուրի
օրագիրը սկսաւ 1704ին, երկրորդը 1720ին : Երբ 1775
Թուականին խառնութիւնը փրծաւ 55 օրագիրէն աւելի
չկար Միտլան-Նանսնգներու մէջ : 1810ին այս Թիւ
559ի էլաւ : 1828ին, 852ի. 1840ին, 1651ի. 1850ին,
2526ի : Այսօր զրեթէ չորս հազար լրագիր կայ հոն :
1850ին ստուած օրագիրներու ամէն Թիւերը մինչև
427 միլիօնի կը հասնին :

— Նոր օրինակ մը, բիրաւորներէ հոք, մեր թշնա-
մինքնու չարամտութեան և ծիծաղելի տգիտութեան :
« Ի՞նչպէս կարելի է պատասխան տալ, կ'ըսէ անոնցմէ
մէկը ընկերութեան մէջ ուր մեր վերջին յօդուածին
վրայ խօսք կ'ըլլար, ի՞նչպէս պատասխանել կարելի է
երբ Վօլթերէն կամ ասոր նման անստուշած հեղինակ-
ներէ օրինակ կը յիշէ մեզի... :

Եւ ի՞նչ է արդեօք այն օրինակը զոր կը յանդգնինք
յիշելու Սրեմուտքին մէջ, — Հետեւեալ ոտանաւորին
Թարգմանութիւնը :

Au tribunal de Dieu je t'attends dans l'année.

Գիտէինք որ տգիտութիւնը յանդուգն է, վատ է,
ոմամօծ է, բայց ստուգիւ զեւ այսքան զէվզէկ զէմքով
չէր երեւած մեկ... : Տաս տարեկան զազղիացի երիտա-
ւորդ մ'անգամ գիտէ որ Տաւարակաք (les Templiers)
ըսուած ոլբերգութիւնը Ռէյնուարինն է և ոչ Վօլթերին,
Մեր թշնամինքը տակաւին զայն պիտի սովորին և
շտըբ հայերուն սով բնցընեն... Ժրանայի զրազիտու-
թեան պատմութիւնը :

Ահա Ռէյնուարին սղերգութեան այն հատուածը որու
մէկ տողը Թարգմանք էինք. լեզուազէտը կրնան կար-
գալ և զատել զմեկ :

LE CONNÉTABLE A LA REINE.

Un immense bûcher, dressé pour leur supplice,
S'élève en échafaud, et chaque chevalier
Croit mériter l'honneur d'y monter le premier :
Mais le grand-maitre arrive, il monte, il les devance.

Son front est rayonnant de gloire et d'espérance ;
Il lève vers les cieux un regard assuré :
Il prie, et l'on croit voir un mortel inspiré.
D'une voix formidable aussitôt il s'écrie :
« Nul de nous n'a trahi son Dieu, ni sa patrie ;
Français, souvenez-vous de nos derniers accents :
Nous sommes innocents, nous mourons innocents.
L'arrêt qui nous condamne est un arrêt injuste ;
Mais il est dans le ciel un tribunal auguste ,
Encore quarante jours!... je l'y vois comparaitre...
Chacun en frémissant écoutait le grand-maitre.
Mais quel étonnement, quel trouble, quel effroi !
Quand il dit : « O Philippe, o mon maître, o mon roi !
Je te pardonne en vain, ta vie est condamnée,
Au tribunal de Dieu je t'attends dans l'année. »

— Զելզէկ զրազէտ մը, որուն շողորթ և կեղծա-
ւոր բարքը առնուկ եղած է Պօլիսի մէջ և որուն ծանրը,
ուղտի ծանրի պէս, մեծերու առջև խոնարհելէն բըր-
տացի է, կը յանդգնի, չգիտենք ի՞նչ պատճառով, ծանր
բառ մը մեր հանդէսին զէմուղլէ և իր յօդուածը անա-
նուն հրատարակել : Առանց առթի նախատեղ բեռնա-
կիրի սովորութիւն է, և չհամարձակիլ նախատիմքին
հերքել իր անունը դնել վատութիւն կ'անուանի :

Կրնայինք ծանրագոյն բառ մ'ընարել և աւելի իրա-
ւունքով, կարծենք, զինքը խաղաղասկի, բայց բարեմիտ
հատարակութիւնը մեզմէ տուաւ այս պարտքը կատարած
է այնպիսի զրոշմ մը կնքելով յիշեալ զրազէտին հակ-
տին վրայ որ անեղծանելի պիտի տեսնուի միշտ հոն :
Ի՞նչ կը մնայ ուրեմն ընել այս պարագայի մէջ : —
Արհամարհել վատութիւնը որով իր զէվզէկութիւնը և
թշնամութիւնը կը բարդուին տեսակ մը Հայերու ըստ-
ւէրին հերքել :

Ի տեսանէ անտի հանաչի ծառայն... :

Ս. Ո.

Համարատու Տըլէդր.

ԻՐԱՐԻՉ, ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱԳՐԱԴԻԹԻՒՆ.

Paris.— Typographie Arménienne Walder, rue Bonaparte 44.